

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2021

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբագիրներ՝

Արմեն Գրիգորյան
Զոհրակ Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2021

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբագիրներ՝

Արմեն Գրիգորյան
Զոհրակ Հովհաննիսյան



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

ՀՏԴ 324
ԳՄԴ 66.3(5Հ)68
Ա 940

Հետազոտող հեղինակներ՝ Տաթևիկ Ղազարյան, Անուշիկ Մկրտչյան,
Վիկտորյա Մելքոնյան, Էդգար Վարդանյան

Խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Զոհրակ Հովհաննիսյան

Սրբագրիչ՝ Նվարդ Ալոյան

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2021.
Ա 940 ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ / Տաթևիկ Ղազարյան, Անուշիկ
Մկրտչյան, Վիկտորյա Մելքոնյան, Էդգար Վարդանյան.- Եր.:
Քաղաքականության հետազոտական կենտրոն, 2021.- 98 էջ:

Հեղինակների կողմից վերլուծվել են մի շարք կուսակցությունների և
դաշինքների արտաքին քաղաքականությանը վերաբերող ծրագրա-
յին դրույթները, քաղաքացիական հասարակության նկատմամբ
դիրքորոշումները, ապատեղեկատվության տարածման որոշ առանձ-
նահատկություններ, ինչպես նաև ատելության խոսքը, թշնամանք
հրահրող, ռազմատենչ և վիրավորական հռետորաբանությունը:

Ժողովածուն լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական
կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ-
Հայաստանի աջակցությամբ իրականացված ծրագրի շրջանակում:
Ներառված վերլուծությունները չեն արտահայտում Բաց հասարա-
կության հիմնադրամներ-Հայաստանի տեսակետը:

ՀՏԴ 324
ԳՄԴ 66.3(5Հ)68

ISBN 978-9939-1-1350-0
© Քաղաքականության հետազոտական կենտրոն, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան Զոհրակ Հովհաննիսյան	5
Ներածություն Արմեն Գրիգորյան	8
Ընտրություններին մասնակցած վեց քաղաքական ուժերի արտաքին քաղաքականության մոտեցումների համեմատական վերլուծություն Տաթևիկ Ղազարյան	19
Նախընտրական շրջանում քաղաքական ուժերի դիրքորոշումները քաղաքացիական հասարակության նկատմամբ Անուշիկ Մկրտչյան	37
Ապատեղեկատվության տարածման և թշնամանք հրահրող հռետորաբանության օգտագործման վերլուծություն Վիկտորյա Մելքոնյան	56
Ատելության խոսքը, ռազմատենչ և վիրավորող հռետորաբանությունը 2021-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում Էդգար Վարդանյան	75

Զոհրակ Հովհաննիսյան

Նախաբան

2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը պայմանավորված էր հայկական կողմի պատերազմում կրած ողբերգական պարտության հետևանքով առաջացած ներքաղաքական ճգնաժամով: Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի թիմակիցները, այսինքն՝ այն ուժերը, որոնք 1998 թ. ի վեր մասնակցել էին երկրի կառավարմանը, ստեղծված իրավիճակից օգտվելու և կորցրած իշխանությունը վերադարձնելու հնարավորության ակնկալիքով դուրս եկան ակտիվ փողոցային պայքարի՝ փորձելով հարկ եղած դեպքում անգամ ուժով Նիկոլ Փաշինյանին հեռացնել իշխանությունից: Այդ գործընթացում լայնորեն կիրառվում էին այդ շրջանակների ունեցած մեծածավալ ֆինանսական, լրատվական և վարչական ռեսուրսները:

Սակայն, ի զարմանս նրանց, նրանք չստացան հասարակության լայն շրջանակների աջակցությունը: Ստեղծվել էր մի յուրահատուկ իրավիճակ. իշխանության վարկանիշը հայտնի պատճառով զգալիորեն նվազել էր, սակայն փողոց դուրս եկած ուժերի վարկանիշն էլ ակնհայտորեն զիջում էր իշխանության վարկանիշին: Հիմնականում ա՛յս հանգամանքը հաշվի առնելով, Ն. Փաշինյանը որոշեց գնալ արտահերթ ընտրությունների:

Սոցիոլոգիական հարցումները ցույց էին տալիս, որ ընտրողների կեսից ավելին կողմնորոշված չէր՝ թե ինչպես կքվեարկեր գալիք ընտրություններում: Մի կողմից ողբերգական պարտության համար հիմնական պատասխա-

նատու իշխանությունն էր՝ ի դեմս Ն. Փաշինյանի, մյուս կողմից՝ Հայաստանում ավելի քան քսան տարի կառավարած կիսաավտորիտար, կոռումպացված, մարդու իրավունքները զանգվածաբար ոտնահարած շրջանակները: Քաղաքացիները չէին աջակցում իշխանությանը՝ ծանր պարտության պատճառով, բայց, միաժամանակ, չէին պատրաստվում քվեարկել իշխանության հայտներկայացրած 2-րդ և 3-րդ նախագահներին հարող քաղաքական շրջանակներին: Այս իրավիճակը նկատի ունենալով, սկսվեց չկողմնորոշված ընտրազանգվածի հետ աշխատելու գործընթաց: Այդ սովոր ընտրազանգվածը, որի դերակատարումը որոշիչ էր լինելու ընտրությունների ժամանակ, դարձավ հիմնական թիրախ քաղաքական դերակատարների համար:

Արագորեն կազմավորվեցին նաև նոր կուսակցություններ, որոնց մի մասն ակնհայտորեն հատուկ նախագծեր էին՝ ստեղծված երկու հիմնական ուժերի կողմից: Այդ նորաստեղծ կուսակցություններն, ըստ էության, հասարակությանն առաջարկելու նոր բան չունեին, բայց ունեին խնդիր՝ հնարավորինս շատ քվեներ խլել չկողմնորոշված ընտրողների հաշվին: Դրանով իսկ նրանք փորձում էին թուլացնել հակառակորդի ճամբարի հնարավոր ուժեղացումն՝ ի հաշիվ չկողմնորոշված ընտրազանգվածի:

Ինչ-որ պահի բողոքի մասնակիցների կառավարումը բերեց մի իրավիճակի, երբ հասարակությունում ձևավորվեց ընկալում, որ պետք էր ընտրություն կատարել գործող իշխանության և հանրության կողմից մերժված նախկին իշխանության միջև:

Արմեն Գրիգորյան

Ներածություն

2021 թ. հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցան չափազանց լարված մթնոլորտում: Դեռ ընտրություններից ամիսներ առաջ կանխատեսելի էր, որ ռազիոնալ, բովանդակալից բանավեճը նախընտրական քարոզչությունում աննշան տեղ էր ունենալու: Ոչ միայն ռազմական պարտության հետևանքով առաջացած հոգեբանական տրավման, այլև բռնությամբ ներքաղաքական խնդիրներ լուծելու ընդդիմության որոշակի հատվածի փորձերը, քաղաքական հակառակորդների՝ միմյանց նկատմամբ ունեցած ատելությունը և թշնամանք բորբոքող հոետորաբանությունը, լրացուցիչ նպաստել են քաղաքական բևեռացմանը, անհանդուրժողականության աճին, ծայրահեղական հայացքների տարածմանը և ներքին ու արտաքին թշնամիներ փնտրելուն: Դա, բնականաբար, խթանեց շատ կուսակցությունների և դաշինքների ծրագրերում ու նախընտրական քարոզչությունում ամբոխավարական, ռևանշիստական ու ազգայնամուլական դրույթների օգտագործմանը: Բացի այդ, բավական ակնհայտ էր, որ քաղաքական ուժերի մեծամասնության գործողություններն ու հոետորաբանությունը նախընտրական քարոզչության տրամաբանության մեջ էին տեղավորվում դեռևս 2020 թ. նոյեմբերից՝ չնայած իշխող ուժի ներկայացուցիչները հրապարակային ելույթներում ժխտում էին արտահերթ ընտրությունների անցկացման անհրաժեշտությունը: Ի վերջո, ընտրությունների արդյունքում Ազգային ժողովում են հայտնվել այն ուժերը, որոնք փաստացի կես տարուց

ավելի տևած նախընտրական քարոզչությունում կարողացել էին ներդնել առավելագույն ֆինանսական և լրատվական ռեսուրսներ:

Ընտրությունների պարզ համամասնական համակարգով անցկացումը դրական փոփոխություն էր. գնահատելի է քաղաքացիական հասարակության բազմաթիվ կառույցների կատարած աշխատանքը՝ զոնե այդ բարեփոխման իրականացման անհրաժեշտությունը համակարգային բարեփոխումների նկատմամբ աննշան հետաքրքրություն ցուցաբերող իշխող ուժին բացատրելու, ջատագովության նպատակով: Միաժամանակ, ակնհայտ էր, որ չկայացած կուսակցական համակարգի¹ և թույլ, թերզարգացած քաղաքական մշակույթի պայմաններում դարձյալ չափազանց մեծ կարևորություն էր ունենալու խարիզմատիկ առաջնորդությունը՝ ինչը միանգամայն կանխատեսելի կերպով՝ հատկապես հետպատերազմյան քաղաքական սուր բևեռացման պայմաններում, հերթական անգամ հանգեցրեց անձերի, այլ ոչ թե ծրագրերի և հանրային քաղաքականության առաջարկների մրցակցության:

Այս ժողովածուում գետեղված հոդվածների հեղինակները վերլուծել են մի շարք կարևոր, երկարաժամկետ ազդեցության պոտենցիալ ունեցող խնդիրների վերաբերյալ որոշ կուսակցությունների և դաշինքների ծրագրային դրույթներն ու օգտագործված հոետորաբանությունը՝

¹ Այս համատեքստում տեղին է մեջբերել վրացի քաղաքագետներ Կորնելի Կակաչիայի և Բիծինա Լեբանիձեի [դիտարկումը](#). ի տարբերություն արևմտյան ժողովրդավարական երկրների, որտեղ քաղաքական կուսակցություններն անկախ կառույցներ են՝ ներքին ժողովրդավարությամբ, հետամնաց (հեղինակներն օգտագործում են «զարգացող» տերմինը՝ որն, ըստ էության, մեղմասություն է) երկրներում կուսակցությունները սովորաբար խարիզմատիկ առաջնորդների «սեփականությունն» են և քաղաքացիներին կառավարման գործընթացի հետ կապող օղակ չեն հանդիսանում:

կենտրոնանալով նախորդ գումարման խորհրդարանում ներկայացված, ինչպես նաև 1991 թ. ի վեր Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցրած գործիչների կողմից ղեկավարվող ուժերի վրա: Այդպիսի ընտրանքը պայմանավորված էր մասնավորապես նրանով, որ այդ ուժերն օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք պատճառներով, ներառյալ վերը նշված՝ նախկին գումարման ԱԺ-ի լուծարումից և ընտրությունների պաշտոնական նշանակումից ամիսներ առաջ արդեն իսկ քարոզչություն ծավալելու հնարավորությունը, որոշակի առավելություն ունեին:

Սա բնավ չի նսեմացնում որոշ այլ կուսակցությունների մոտեցումներն ու ծրագրային առաջարկները, որոնք կարող են մասամբ կիրառվել՝ արտախորհրդարանական ուժերի հետ որոշակի խորհրդակցական ձևաչափ մշակելով, փորձագիտական ոլորտում, կամ այլ կերպ:

Միևնույն ժամանակ, նկատելի էր, որ մի շարք, կարելի է ասել լուսանցքային կուսակցություններ, մասնակցում էին ընտրություններին զուտ նրա համար, որպեսզի իրենց ցուցակներում ընդգրկվածներից հանրությանը հայտնի միակ գործիչը բանավեճերի ընթացքում քողարկված քարոզչություն իրականացնել՝ իշխող ուժի, կամ էլ «Հայաստան» կամ «Պատիվ ունեմ» դաշինքներից մեկի օգտին:

Բացի այդ, որոշ դեպքերում հնարավորինս արմատական «հայրենասեր» ներկայանալու մղումը ծնել է անգամ այնպիսի Էկզոտիկ գաղափարներ, ինչպես, օրինակ՝ «Սահմանադրությունում ամրագրել «հոմո արմենիկոս» տեսակը և արարիչ-մարդ-պետություն-հասարակություն հիերարխիան»: Այդօրինակ ընկալումների առկայությունը, որոշ դեպքերում՝ անգամ բավական լայն տարածումը, մի քանի պատճառ ունի: Դա, մասնավորապես, տասնամյակների ընթացքում խորհրդային իշխանության՝ առաջին հերթին գաղափարախոսության

և քարոզչության համար պատասխանատուների, նաև ՊԱԿ-ի ուղղորդմամբ աշխատած պատմաբանների և «ստեղծագործական մտավորականության» գործունեության արդյունքն է, այնուհետև՝ չլուծված հակամարտությունն իշխանության և շահույթի աղբյուր դարձնելու, ինչպես նաև առհասարակ՝ թերզարգացած քաղաքական մշակույթի և ընդհանուր կրթական մակարդակի:

Նմանօրինակ՝ զարգացած քաղաքական մշակույթին անհարիր, ակնհայտորեն զավեշտալի տարրեր պարունակող նախընտրական ծրագրերն ու կուսակցությունների ներկայացուցիչների ելույթները հետազոտելն առավել օգտակար կլինե՞ր սոցիալական ու մշակութային մարդաբանների և հոգեբանների տեսանկյունից, իսկ ավելի գործնական առումով՝ գուցե կրթության ոլորտում քաղաքականություն մշակողների կողմից:

Այսպիսով, հեղինակների կողմից վերլուծվել են վեց կուսակցությունների և դաշինքների արտաքին քաղաքականությանը վերաբերող ծրագրային դրույթները՝ որոնցից մասնավորապես խորհրդարան անցած ուժերի մոտեցումները շարունակվող անվտանգային ճգնաժամի պայմաններում մնում են արդիական, քաղաքացիական հասարակության նկատմամբ քաղաքական ուժերի դիրքորոշումները, ապատեղեկատվության տարածման որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև ատելության խոսքը, թշնամանք հրահրող, ռազմատենչ և վիրավորական հռետորաբանությունը:

Տաթևիկ Ղազարյանի՝ վեց քաղաքական ուժերի արտաքին քաղաքականության մոտեցումներին կատարած անդրադարձում հաշվի են առնվել, մասնավորապես, արցախյան հակամարտության լուծման, հարևան երկրների, Ռուսաստանի Դաշնության և այլ արտաքին դերակատարների հետ հարաբերությունների նկատմամբ դիրքորոշումները: Նկատելի է, որ բացի ՀԱԿ-ից, մյուս քաղաքական ուժերն

այս կամ այն չափով հնարավոր են համարում տարածքների վերադարձը՝ սկսած նախկին ԼՂԻՄ-ի տարածքների վերականգնումից («Քաղաքացիական պայմանագիր»), վերջացրած Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնմամբ:

Արտաքին քաղաքականության համատեքստում կարելի է լրացուցիչ նշել, որ, ինչպես արդեն նշվել էր այս ծրագրի շրջանակում Մեդիա կենտրոնի հետ [հարցազրույցի](#) ընթացքում, նախընտրական ծրագրերում, ինչպես նաև ելույթներում բացակայել է նման արդյունքների հասնելու գործնական մեխանիզմների նկարագրությունը: Այդօրինակ մոտեցումը բավական հատկանշական է՝ «հայրենասեր չերևալուց» խուսափելու, ականջահաճո խոստումներ տալու, ոմանց բառապաշարով՝ «բայդուշություն չանելու» մտայնության պայմաններում: Այն նաև սեփական, կամաթե ակամա կատարած, սխալներն ու թերացումները չընդունելու, տեղի ունեցածը չվերաիմաստավորելու ևս մի արտահայտություն է. դա անմիջականորեն կապված է նաև նախընտրական քարոզչության ընթացքում մեղքը միմյանց վրա բարդելու մարտավարության և օգտագործված հոետորաբանության հետ: Ականջահաճո, բայց այլոց շահերն ու ուժերի հարաբերակցությունն անտեսող, գործնական իրագործում չենթադրող ծրագրային դրույթի օրինակ էր նաև «Հայաստան» դաշինքի՝ Վրաստան-ՌԴ, Վրաստան-Աբխազիա հարաբերություններում միջնորդ դառնալու պատրաստակամությունը:

Հայտնի է նաև, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման և հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում որոշ ուժեր հնարավոր են համարում անգամ ավելի մեծ տարածքների նկատմամբ վերահսկողության ձեռքբերումը, քան եղել է մինչ 2016 թ. ապրիլյան պատերազմը: Բավական տարածված է նաև մի մտայնություն, ըստ որի՝ առանձին պետությունները, ՄԱԿ-ը կամ «միջազգային հանրությունը» 1991 թ. Հայաստանի և Ադրբեջանի անկախությունը ճանաչել էին ոչ թե

համապատասխան միութենական հանրապետությունների, այլ, ենթադրաբար, ինչ-որ այլ սահմաններով: Գործնական մեխանիզմների անհրաժեշտությունը հաշվի չառնելով, «ցատկով» խնդիրներ լուծելու ցանկությամբ աչքի են ընկնում նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից անմիջապես դուրս գալու և ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին անդամակցելու առաջարկները, որոնք, կարճաժամկետ առումով անվտանգության ապահովման խնդրից զատ, հաշվի չեն առնում ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի անդամության թեկնածուներին ներկայացվող պահանջները՝ ժողովրդավարական չափանիշներին համապատասխանելու և այլ առումներով, իսկ հակամարտության կարգավորման առաքելությունը ևս ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին հանձնելու ցանկությունը, բացի այդ կառույցների գործունեությունը կարգավորող սկզբունքներն անտեսելուց, դարձյալ կապված է «պատմական արդարության» մասին սեփական՝ իրականությունից կտրված պատկերացման հետ:

Նկատելի էին իրականության թյուրընկալման այլ հատկանիշներ ևս: Այսպես, նորահայտ կուսակցություններից մեկի ծրագրում նշված էր. «որպես Հայաստանի առանձնահատկություն ենք դիտարկում այն հանգամանքը, որ Արցախյան պատերազմից հետո երկիրը դարձել է տարածաշրջանային անվտանգության արտահանող»: Հարկ է նշել սակայն, որ տերմինաբանական խառնաշփոթով աչքի էին ընկել նաև որոշ խոշոր, արդեն երկար ժամանակ քաղաքական ասպարեզում գտնվող կուսակցություններ, օրինակ՝ ԲՀԿ-ն մասնավորապես կարևորել է «Եվրասիական տնտեսական միության շրջանակում Հայաստանի Հանրապետության բազմալեկտոր ինտեգրման ընդլայնումը»:

Բացի այդ, կարելի է նաև նշել, որ որոշ ուժերի նախընտրական ծրագրերում շարադրվածը երբեմն այս կամ այն չափով հակասում էր այդ ուժերի ներկայացուցիչների հռետորաբանությանը. հավանաբար, հենց

վերջինս էր իրական տրամադրությունների արտահայտությունը: Օրինակ՝ «Պատիվ ունեմ» դաշինքի ծրագրում ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումը որպես քաղաքական գերակայություն նշելու հետ մեկտեղ, դաշինքի ներկայացուցիչ, ՀՀԿ փոխնախագահ Ա. Աշոտյանի նախընտրական ասուլիսներից մեկում տեղ էր գտել Արևմուտքի «երկակի չափանիշներից» դժգոհելը՝ պատերազմի ընթացքում Հայաստանին չօգնելու և միաժամանակ՝ Ա. Նավալնու ու Բելառուսի 2020 թ. նախագահական ընտրություններում իրականում հաղթած Ս. Տիխանովսկայայի նկատմամբ ցուցաբերված հատուկ հետաքրքրության կապակցությամբ: Ա. Նավալնուն ու Ս. Տիխանովսկայային այդպիսի անդրադարձները (քարոզչական նպատակներով նմանատիպ հիշատակումներ որոշ գործիչների կողմից եղել էին դեռևս նախապատերազմյան շրջանում, իսկ արդեն նորընտիր ԱԺ-ի առաջին նստաշրջանում դեմագոգիական նույն հնարքն օգտագործեց «Հայաստան» դաշինքի պատգամավոր Ա. Ղազինյանը) հանդիսանում են ՌԴ-ի նկատմամբ հավատարմության յուրահատուկ ցուցադրություն, և միաժամանակ՝ ընդդիմախոսներին «ռուսատյաց» պիտակավորելու հնարք:² Թերևս իրական մտադրությունների՝ ի տարբերություն նախընտրական ծրագրում ձևականորեն նշվածի, արտահայտություն էր նաև «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռ. Քոչարյանի այն պնդումը, թե իբր ԵՄ-

² Բացի այդ, հարկ է նշել, որ Արևմուտքին պատերազմի ընթացքում Հայաստանին չօգնելու պատճառով «երկակի չափանիշների» համար մեղադրելը (ինչը հետընտրական ժամանակաշրջանում ևս բավական տեսանելի է) թե՛ ՀՀԿ-ի և նրա առաջնորդ Ս. Սարգսյանի, թե՛ այլ գործիչների՝ բանակցությունների էությունը տարիներ շարունակ հասարակությանն աղավաղված կերպով ներկայացնելու, Լեռնային Ղարաբաղին սահմանակից անվտանգության գոտու տարածքներն «ազատագրված» հռչակելու և «պատմական արդարության» ու ոչմիթիզականության դիրքերից հանդես գալու երկարամյա քաղաքականության բնական շարունակությունն է:

ի կողմից Հայաստանին 2,6 մլրդ. եվրոյի օժանդակության տրամադրումն «ուղղված է Ռուսաստանի դեմ»:

Անուշիկ Մկրտչյանն իր հոդվածում անդրադառնում է նախընտրական շրջանում քաղաքացիական հասարակության նկատմամբ քաղաքական ուժերի դիրքորոշումներին: Հետազոտության նպատակով, բացի ծրագրային դրույթներից և հրապարակային ելույթներից, անցկացվել են հարցազրույցներ քաղաքական գործիչների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ մասնավորապես ընտրությունների արդյունքում ԱԺ անցած ուժերի հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

Վիկտորյա Մելքոնյանն անդրադառնում է նախընտրական շրջանում տեղ գտած ապատեղեկատվությանն ու լրատվական մանիպուլյացիաներին, ինչպես նաև վիրավորական ու թշնամանք պարունակող հռետորաբանության օգտագործմանը՝ մի շարք օրինակներով: Հետազոտությունը բացահայտում է ընդդիմախոսներին և նրանց հետևորդներին թիրախավորելու միտումները և ձևերը:

Էդգար Վարդանյանի հետազոտությունը նույնպես հիմնված է մի շարք օրինակների վրա՝ կենտրոնանալով մասնավորապես ատելության խոսքի վրա. հեղինակը նաև վերլուծում և հիմնավորում է՝ քաղաքական գործիչների ընդդիմախոսներին ուղղված որ արտահայտություններն էին հանդիսանում ատելության խոսք՝ ըստ բնորոշման, իսկ որոնք պարզապես վիրավորական բնույթ ունեին: Բացի այդ, հետազոտությունը ցույց է տալիս, որ քաղաքական գործիչները կիրառել են նաև քրեական ենթամշակույթի հռետորաբանությունը և բառապաշարը:

Այս համատեքստում կարելի է լրացուցիչ նշել, որ ընդդիմախոսների տղամարդկությունը կասկածի ենթարկելը,

«դու», «արա», «այ տղա», կամ այլ անհարգալից դիմելաձևերի օգտագործումը՝ ընդդիմախոսների բանավոր նվաստացմամբ ու այդպիսով՝ ստորադաս կարգավիճակ պարտադրելու ձգտմամբ, հատկանշական է ոչ միայն քրեական ենթամշակույթի կրողների համար: Նմանատիպ մտածելակերպ գոյություն ունի տարբեր պրիմիտիվ հասարակություններում, ինչպես նաև կրոնական ֆանատիկոսների և քվազիկրոնական՝ դոգմատիկ, իբր բացարձակ ճշմարտության վրա հիմնված, ամբողջատիրական քաղաքական գաղափարախոսությունների հետևորդների շրջանում. դրա օրինակներից է կոմունիզմը, հայկական միջավայրում՝ նաև հայդատականությունը (սրա հատկանիշներից են, մասնավորապես, ազգային/ապազգային հակադրությունը, «ազգադավ» և նմանատիպ այլ պիտակների օգտագործումը, և այլն): Մյուս կողմից, քրեական ենթամշակույթը նույնպես քվազիկրոնական է՝ իր «ճշտով», դոգմաներով և ամբողջատիրական (քանի որ, տարածվելով նաև բանտից դուրս, այն ձգտում է վերահսկել հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները՝ անձնական հարաբերությունները, պետական մարմինների, օրինապահ և դատական համակարգերի հետ շփումները, բանակային անցուղարձը և այլն) բնույթով:³

Կարելի է նաև նշել, որ քրեական ենթամշակույթով պայմանավորված մտածելակերպն ազդեցություն է ունեցել նաև բանակցություններով հակամարտությունը

³ Հարկ է սակայն նշել, որ քվազիկրոնական, դոգմատիկ, ամբողջատիրական բնույթ՝ «բացարձակ ճշմարտության» սեփական տարբերակը պարտադրելու ձգտմամբ, ունեն նաև թե քրեական ենթամշակույթից, թե «տղամարդկությունն», առնականությունն, արիությունը պարբերաբար վերահաստատելու պարտադրանքից զերծ, «մաշխատական» չհանդիսացող նորահայտ գաղափարախոսությունները ևս. դրանում կարելի է համոզվել՝ մասնավորապես հետևելով որոշ արևմտյան երկրներում գործող, իրենց «առաջադիմական» հռչակած մի շարք խմբավորումների՝ արմատական «կանաչներ», «անտիֆա» և այլն:

լուծելու հնարավորության կորստի վրա: Բավական է հիշել տարիներ շարունակ հակառակորդին պիտակավորելն ու ծաղրելը՝ տարրական հարգանք ցուցաբերելու փոխարեն, անգամ, ըստ էության, պետական մակարդակով (օրինակ, «Կիլոհիմ» մուլտֆիլմը Ռ.Քոչարյանի մերձավոր Դ.Սահակյանցի կողմից նկարահանվում էր քյուջեի միջոցների հաշվին): Ի վերջո, ընդհանուր առմամբ, զիջելով պայմանավորվածություններ ձեռք բերելու նկատմամբ բացասական վերաբերմունքը նույնպես քրեական ենթամշակույթի վրա հիմնված աշխարհընկալման հատկանիշներից է:

Տաթևիկ Ղազարյան

Ընտրություններին մասնակցած վեց քաղաքական ուժերի արտաքին քաղաքականության մոտեցումների համեմատական վերլուծություն

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո կարևոր էր հասկանալ ԱԺ 2021 թ. ընտրություններին առաջադրված քաղաքական ուժերի մոտեցումներն արտաքին վեկտորների նկատմամբ, ուստի անհրաժեշտ էր ուսումնասիրել արցախյան հիմնախնդրի, ՀՀ-ի դաշնակիցների և հակառակորդների ընկալումն ու տարածաշրջանում փոփոխություններից հետո ի հայտ եկած նոր մարտահրավերների հանդեպ ունեցած արտաքին քաղաքական ուղղվածությունը: Հետազոտության նպատակն է վեր հանել արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի արտաքին քաղաքականության տեսլականը և համեմատական վերլուծության միջոցով ցույց տալ ընտրանքի վրա հիմնված քաղաքական ուժերի նմանություններն ու տարբերությունները:

Հետազոտությունն իրականացվել է ծրագրերի ուսումնասիրության, հանրային բանավեճերի, քննարկումների, այլ տեսանյութերի, հանրագումարների, ընտրագանգվածի հետ հանդիպումների մշտադիտարկման և համեմատության մեթոդներով: Այս հոդվածի ընտրանքը կազմում են նախորդ գումարման խորհրդարանում ընդգրկված «Քաղաքացիական պայմանագիր», «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցություններն, ինչպես նաև այն քաղաքական ուժերը, որոնց առաջ-

նորդները ՀՀ անկախացումից ի վեր իշխանության եկած գործիչներ են՝ Հայ Ազգային Կոնգրեսը, «Հայաստան» և «Պատիվ ունեն» դաշինքները:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

Ռուսաստան. ՔՊ կուսակցության ծրագրում ՌԴ-ն հիշատակվել է մի քանի բաժիններում, հիմնականում՝ անվտանգությանն, արտաքին քաղաքականությանն ու տնտեսությանը վերաբերվող հատվածներում: ՌԴ-ի հետ հարաբերությունների մակարդակում հիմք են ընդունում 1997 թ. բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրով ստանձնած պարտավորություններն, ինչպես նաև դրանց շրջանակի ընդլայնումը, մասնավորապես՝ Սյունիքի մարզի ՀՀ պետական սահմանների պաշտպանությանը ներգրավելով ՌԴ 102-րդ ռազմակայանը՝ հենակետերի հսկողության միջոցով: ՌԴ խաղաղապահ ուժերի երկարաժամկետ ռազմական ներկայությունն Արցախում անվտանգության ապահովման կարևորագույն գործոն է համարվել: Նախատեսված է շարունակել իրագործել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ կատարելագործելով հարաբերությունները ՀԱՊԿ-ի շրջանակում: ՌԴ-ի դերի կարևորությունը նաև առանձին հիշատակվում է Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան եռակողմ աշխատանքային հարթակի, մասնավորապես՝ նոյեմբերի 9-ի և հունվարի 11-ի հայտարարությունների դրույթների իրագործման համատեքստում:

Արցախի հիմնահարց. [խնդիրը համարում են չլուծված](#), քանի դեռ կարգավիճակը որոշված չէ: Առաջ են քաշել «անջատում հանուն փրկության» մոտեցումը՝ որպես լուծում, որն Արցախի բնակչության ինքնորոշման լավագույն տարբերակն է, այդ թվում՝ վերականգնելով նախկին ԼՂԻՄ-ի կազմում ներառված տարածքները՝ ուժի կիրառման բացառմամբ: Խնդրի կարգավորման հարթակը կշարու-

նակի լինել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը՝ ապահովելով բանակցությունների վերսկսումն ու ընթացիկ աշխատանքները:

Ըստ նախընտրական ծրագրի, ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններն են՝

1. Տարածաշրջանի ապաշրջափակումը
2. Արցախյան հիմնախնդրի կարգավորումը
3. Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը:

Կուսակցության նախագահ Նիկոլ Փաշինյանը հանրային հեռուստաընկերությանը տված [հարցազրույցում](#) նշել է, որ Իրանը կարող է դիտարկվել որպես անվտանգային ոլորտում համագործակցության հնարավորություն: Անվտանգային միջավայրի ապահովումը տեսնում են միջազգային հանրության զսպող հնարավորությունների կիրառմամբ, դիվանագիտական աշխատանքով և ՌԴ-ի հետ աշխատանքի միջոցով:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

ԲՀԿ-ն պահպանողական կուսակցություն է: Այն ԱԺ 7-րդ գումարման ընդդիմադիր ֆրակցիաներից էր:

Ինֆոքոմի հետ [հարցազրույցում](#) Արման Աբովյանը նշեց, որ արցախյան հիմնահարցը լուծված չէ, անհրաժեշտ է վերականգնել Արցախի տարածքային ամբողջականությունը, իսկ բանակցությունների հարթակ ընդունել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը: Վրաստանն ու Իրանը բարիդրացիական հարևաններ են համարվում, իսկ Ադրբեյջանն ու Թուրքիան՝ թշնամի պետություններ: Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացումն էլ չպետք է լինի ի հակադրություն ԱՄՆ-ի կամ Ֆրանսիայի, այլ, հաշվի առնելով հայկական սփյուռքի առկայությունը, պետք է միևնույն կերպով զարգացնել հարաբերությունները երեքի հետ էլ:

Կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը Հանրային հեռուստաընկերության հետ **հարցազրույցում** նշեց, որ ՌԴ-ի հետ պետք է նոր ռազմավարական պայմանագիր ստորագրվի, որը «կվերականգնի» երկկողմ հարաբերությունները: Արցախի խնդրի լուծման առաջին քայլ է համարել նաև նրա միջազգային ճանաչումը և տարածքների վերանգնումը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն

ԼՀԿ լիբերալ կուսակցությունը ԱԺ 7-րդ գումարման ընդդիմադիր ֆրակցիաներից էր:

Արցախի հիմնահարց. խնդրի կարգավորման ուղին **տեսնում են** ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքի հիման վրա, սակայն առաջ են քաշում ՀՀ-ին միանալու գաղափարը՝ «անկախացում-միացում» կամ «միացում» տարբերակներով: Խնդրի կարգավորման հարթակ է դիտվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը: Արցախի հիմնահարցում կարևորել են նաև տարածքների ամբողջական վերականգնումը՝ ԱՀ և ՀՀ բանակների հզորացման միջոցով:

Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ կուսակցությունը նախատեսել էր ներկայացնել իրավական պահանջներ՝ պատերազմի ընթացքում նրանց համատեղ գործողությունների հետևանքով իրավունքների խախտման վերաբերյալ դատական հայցեր: Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Չինաստանի հետ հարաբերություններում հստակեցումն են դիտարկել առաջնային, այնուհետև՝ շարունակական զարգացումը, իսկ Վրաստանին և Իրանին դիտարկել որպես բարեկամ պետությունների:

Ինֆոքոմի հետ **հարցազրույցում** Անի Սամսոնյանը նշեց, որ իրենք կողմ են ապաշրջափակմանը հարևան պետությունների հետ, սակայն որոշակի նախապայմաններով: Անվտանգության հարցերով կայու-

նությունը կապում են Ռուսաստանի հետ, սակայն վերանայված պայմանագրերով, ինչի արդյունքում համատեղ նոր գորամիավորում կստեղծվեր Սյունիքում:

Կուսակցության նախագահ Էդմոն Մարությանը Պետրոս Ղազարյանի հետ [հարցազրույցի](#) ժամանակ մատնանշել է, որ ՀՀ-ի բարեկամ, թերևս, միայն Ռուսաստանն է մնացել, իսկ նախկինում բարեկամ Իրանն ու Վրաստանը պատերազմի ժամանակ իրենց ոչ բարեկամաբար դրսևորեցին: Սակայն, իր կարծիքով, Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացումը չի նշանակում ամբողջովին դառնալ նրա կամակատարը տարածաշրջանում, քանի դեռ ՀՀ-ն սահմանադրորեն անկախ պետություն է:

Հայ Ազգային Կոնգրես

ՀԱԿ-ում ընդգրկված մի շարք քաղաքական գործիչներ նորանկախ ՀՀ-ի արտաքին քաղաքականության ձևավորման ընթացքում ունեցել են հիմնադիրի դերակատարում: Ուստի, ԼՂ հակամարտությունը և դրանից բխող արտաքին ռազմավարական ուղենիշերը մեծամասամբ բխում են Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման տարիներին որդեգրած սկզբունքներից: ՀԱԿ-ի քաղաքական ծրագրում **Ռուսաստանն** ունի հատուկ շեշտադրվածություն, ինչը հաշվի է առնվում երկկողմ ռազմավարական հարաբերություններում համակարգողի դերը ստանձնողների՝ ԱԳՆ-ի, Անվտանգության խորհրդի և այլ միջգերատեսչական կառույցների աշխատանքի կազմակերպումը պլանավորելիս: ՀՀ բանակի վերականգնումն ու վերագինումը կապում են ՌԴ-ի հետ:

ՀԱԿ-ի պատգամավորի թեկնածուներից Տիգրան Պասկեհյանն Ինֆոքոմի հետ [հարցազրույցում](#) նշել է, որ տարածաշրջանը գտնվում է Ռուսաստանի ազդեցության ներքո, և «մենք պետք է մեր հարևանների հետ գնանք երկխոսության առանց միջնորդների», չվախենալով, որ կարող ենք որևէ բան կորցնել, և նպատակ ունենալով

Հայաստանը դարձնել բաց պետություն՝ օգտվելով բոլոր հնարավորություններից:

Ադրբեջանի հետ հարաբերություններում ՀԱԿ-ը հղում է կատարել ԵԱՀԿ Մինսկի խմբի դերակատարությանը և առաջարկել զինված հակամարտության կարգավորման պայմանագրի կնքում՝ երկուստեք փոխզիջումներով, որը կծառայեցվեր երկկողմ հարաբերությունների կառուցմանը: Երկարաժամկետ հեռանկարում առաջարկվել է վստահության կառուցման միջոցառումների՝ բանակցությունների երկրորդ, երկարաժամկետ փուլը, որի վերջնական նպատակը պետք է լինի ինքնորոշման իրավունքի հիման վրա Արցախի վերջնական իրավական կարգավիճակի սահմանումը, նաև առաջին փուլում չլուծված մյուս վիճահարույց հարցերի կարգավորումը: Այսպիսով, 44-օրյա պատերազմից հետո ՀԱԿ-ը շարունակում է Արցախի հարցի վերջնական կարգավորումը տեսնել ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա, ինչը հայկական կողմը պնդում էր բանակցությունների ընթացքում՝ հղում անելով միջազգային իրավունքին:

Հանրային հեռուստաընկերությանը տված **հարցազրույցում** Լ. Տեր-Պետրոսյանը նշել է, որ արցախյան կարգավորման հարցում չկա դաշնակից, և դրա լուծումն այլևս Հայաստանից կախված չէ, իսկ **ՀԱՊԿ**-ի անդամությունից հրաժարվելը՝ փոխարենն ակնկալելով ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ռազմական օգնությունը, միայն կծանրացնի Հայաստանի վիճակը և դա պատրանքների շարքից է, ոչ թե իրատեսական մոտեցում:

Հանրային հեռուստաընկերության առաջին մեծ **բանավեճի** ժամանակ կուսակցության մամուլի խոսնակ Արման Մուսինյանը ևս պնդեց, որ **ՀԱՊԿ**-ից չպետք է նեղանալ, երես թեքել, հակառակը՝ Հայաստանը պետք է ՀԱՊԿ-ում ավելի տեսանելի լինի և ակտիվ աշխատանք տանի, միևնույն ժամանակ հաշվի առնելով անդամ այլ պետությունների տարատեսակ շահերը:

Ինչ վերաբերում է **արտաքին տնտեսական** կողմնորոշմանը, կուսակցությունը խրախուսում է ներկա գործընկերության մթնոլորտն Արևմուտքի՝ ԱՄՆ-ի և Եվրոպական Միության հետ, նաև նրանց և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությամբ բարեփոխումների ապահովումը: Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը նաև կապում են առանձին պետությունների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի, Չինաստանի և Հնդկաստանի հետ: Պետք է նկատել, որ ՀԱԿ-ի նախընտրական ծրագրում ԵԱՏՄ-ն և դրա հետ համագործակցության մասին ոչ մի տեղ նշված չէ:

ՀԱԿ-ն իր **ծրագրում** տնտեսության զարգացման խոչընդոտ է համարում երկու հարևան պետությունների հետ սահմանների փակ լինելը և երկխոսության բացակայությունը: Հայաստանի պոտենցիալը մատնանշում են «Արևմուտք-Արևելք» տնտեսական առանցքում, որի խանգարող հանգամանքն, ըստ ՀԱԿ-ի, հակամարտության մեջ ներգրավված մյուս պետությունների քմահաճույքներն են, որից ձերբազատումը տեսնում են Թուրքիայի և Ադրբեջանի հետ առանձին հարաբերություններ հաստատելով:

Այսպիսով, ՀԱԿ-ի նախընտրական ծրագրի արտաքին քաղաքական բաղադրիչն ամփոփելով հանգում ենք նրան, որ **Ռուսաստանը** մատնանշվում է բանակի վերազինման և տնտեսության զարգացման համատեքստում:

Արցախյան հարցում կարգավորման հասնելու համար նախատեսվում է անմիջական հարաբերությունների մեջ մտնել Ադրբեջանի հետ՝ առանց որևէ միջնորդների, ինչպես նաև՝ Թուրքիայի հետ:

Տնտեսության զարգացման համար ուղենիշային է Արևմուտքի հետ հարաբերությունների խորացման գնալը:

Այսպիսով, ռազմական-անվտանգային հարցերում ծրագիրը կապված է Ռուսաստանի հետ, իսկ արտաքին տնտեսական հարցերում՝ Արևմուտքի:

«Հայաստան» դաշինք

Դաշինքը գլխավորում է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Բոչայրյանը: Դաշինքի մաս են կազմում Հայ Հեղափոխական Դաշնակցություն և Վերածնվող Հայաստան կուսակցությունները: Ըստ դաշինքի հրապարակած նախընտրական ծրագրի, արտաքին քաղաքական քաղաղորդիչը կբաժանենք՝ 1. հարևան երկրների հետ հարաբերություններ, 2. Ռուսաստան, 3. Արցախյան հակամարտություն, 4. արտաքին տնտեսական կապեր և 5. Չինաստան:

Տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ դաշինքը մատնանշել է, որ բաց է հարևան բոլոր պետությունների հետ համագործակցության համար: Հարավային Կովկասում դաշնակիցների հետ համընդհանուր շահերով պայմանավորված խաղաղության նոր մոդելի ձևավորում է առաջարկել: Դաշինքը կողմ է բաց սահմանների գաղափարին և տարածաշրջանում կոմունիկացիաների ընդլայնմանը՝ Հյուսիս-Հարավ, Պարսից Ծոց-Սև ծով, Մետաքսի ճանապարհ, «Մեկ գոտի մեկ ճանապարհ» և Վրաստան-Հայաստան-Իրան Էներգետիկ համագործակցություն:

Հարևան պետությունների հետ հարաբերություններ.

Վրաստանը դիտարկվում է որպես ռազմավարական գործընկեր. շեշտադրվում են ջախսախախտության ինքնության պահպանման ջանքերը: Հայաստանը ներկայացվել է որպես Վրաստան-Աբխազիա հաղորդակցության վերաբացման գործընթացի անմիջական կողմ: Մյուս կողմից, նախատեսվել է նպաստել ՀՀ-ի տարածաշրջանային ապրանքաշրջանառությանը՝ աջակ-

ցելով Վրաստան-ՌԴ թունելի շինարարության կազմակերպմանը: Վրաստան-Հայաստան-Իրան նոր էլեկտրաէներգետիկ հարթակի ձևովորման գաղափար է առաջ քաշվել, որը պետք է ապահովի Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկի մատակարարումը տարածաշրջանային պետություններին:

Իրանը համարվում է ՀՀ-ի համար տարածաշրջանում Վրաստանից հետո մյուս վստահելի գործընկերը: Իրանի հետ տնտեսական հարաբերություններն են առաջնային կարևորվում. առաջարկվում է Քաջարանի թունելը, Հյուսիս-Հարավ ճանապարհը դարձնել Իրան-ԵԱՏՄ ազատ տնտեսական գոտու ամրապնդման հայաստանյան միջոցները, որոնք նաև կհանգեցնեն Պարսից Ծոց-Սև ծով փոխադրումների տարանցիկությանը, դառնալով տարածաշրջանում կոմունիկացիաների հատման կենտրոն:

Մեղիա կենտրոնում **քանավեճի** ժամանակ դաշինքի անդամ Ռուբեն Մելքոնյանը կտրուկ արտահայտվեց Հայաստանի հարևանների հանդեպ դիրքորոշման վերաբերյալ՝ **Թուրքիային և Ադրբեջանին** չհամարելով հարևան, իսկ համարողներին՝ ազգի ողբերգություն. այսպիսով, Թուրքիան և Ադրբեջանը հստակ ընդգծվում են, որպես Հայաստանի թշնամիներ:

Չինաստան. երկկողմ հարաբերությունների ամրապնդումն ու ընդլայնումը տեսնում են Մետաքսի ճանապարհի վերականգնմամբ՝ նպաստելով հայկական կողմից անհրաժեշտ աջակցությամբ: Հայաստանը նաև դիտարկում են որպես օդային տարանցիկ պետություն Եվրոպայից Հարավային Ասիա և Հեռավոր Արևելք՝ մասնավորապես դեպի Չինաստան և Հնդկաստան ճանապարհին: Հայաստանին այս համագործակցությունում տեսնում են «մեկ գոտի, մեկ ճանապարհ» գաղափարի շրջանակում:

Ռուսաստան. նախատեսվում է, որ Հայաստանը կվերագործարկի հարաբերությունները թե՛ տնտե-

սուրբան, և թե՛ անվտանգության բոլոր ուղղություններով: Նշվել է, որ Հյուսիս-Հարավ տարանցիկ ուղու հանգրվան դառնալուն աջակցում են բարեկամ, դաշնակից պետությունները՝ դա համարելով ապագա գլխավոր ձեռքբերումներից:

Արտաքին տնտեսական հարաբերություններ. հիմնական ուղղվածությունը ԵԱՏՄ-ն է, իսկ ԵՄ-ն և Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակում համագործակցությունը՝ լրացուցիչ միջոցներ:

Արցախի հիմնախնդիր. խաղաղ բանակցությունների վերսկսումը **կապում են** ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ, հույս ունենալով հասնել արդարացի լուծման, առաջ քաշելով ինքնորոշման իրավունքի միջոցով Արցախի տարածքային ամբողջականության վերականգմանը հասնելը:

Հանրային հեռուստատեսությունում **քննարկման** ընթացքում դաշինքի անդամ Աննա Գրիգորյանը նշեց, որ իրենց համար արտաքին քաղաքական օրակարգի կարևորագույն հարցը Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանումն է և Արցախի խնդրի հրատապ լուծումը:

«Հայաստան» դաշինքի մայիսի 29-ի համագումարի ժամանակ Ռ. Քոչարյանը **կարևորում էր** արտաքին քաղաքականությանում վստահելի գործընկեր դառնալը, նախկինում եղած վստահությունը վերականգնելը՝ նախ և առաջ դաշնակցի՝ ՌԴ-ի հետ և պետության շահերի հետ համընկնող շահեր ունեցող այլ գործընկեր պետությունների հետ:

Այսպիսով, հետևելով դաշինքի նախընտրական քարոզչությանը լրատվամիջոցներում, հանրահավաքներին և ուսումնասիրելով արտաքին քաղաքականության ծրագրային դրույթները, հանգում ենք նրան, որ առաջնային է համարվում ԵԱՏՄ-ի հետ շարունակական խորը տնտեսական ինտեգրումը: Ռազմական ներուժի ավելացումն ու խթանումը ՌԴ-ի հետ վերականգնվող

հարաբերությունների տիրություն է դիտարկվում: Ավելին, ՌԴ-ի տարածաշրջանային շահերի հետ համընկման պայմաններում նախատեսվող է անցնել հստակ քայլերի՝ ՌԴ-Վրաստան հարաբերությունների վերականգնման հետ կապված: Հանրային խոսքում Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ պահանջատիրություն է առաջ քաշվել՝ Ցեղասպանության միջազգային ճանաչման և 44-օրյա պատերազմի հետևանքների կապակցությամբ: Միևնույն ժամանակ ծրագրային դրույթներում ներկայացվել են դրույթներ բոլոր հարևանների հետ բաց սահմանների քաղաքականության և տարածաշրջանային տարանցիկ ուղիների մասին:

«Պատիվ ունեն» դաշինք

Դաշինքի մաս են կազմում Հայաստանի հանրապետական կուսակցությունը և «Հայրենիք» կուսակցությունը:

Ռուսաստան, ՀԱՊԿ. դաշինքի արտաքին քաղաքականության ծրագրային [դրույթները](#) սկսվում են ՌԴ-ին մատնանշելով որպես ռազմավարական գործընկեր: Անվտանգության հիմքերի ամրապնդումը կապվում է ՌԴ-ի հետ խորացող հարաբերությունների մակարդակում՝ մինչ այդ վերականգնելով կորցրած վստահությունը: Ըստ դաշինքի անդամ Արթուր Վանեցյանի՝ միայն ռուսների հետ պայմանավորվելով կարող ենք դուրս գալ ներկա ճգնաժամային իրավիճակից՝ սկզբում մեր կողմից քայլ անելով, այդպիսով բացարձակեցնելով ՌԴ-ի դերը:

Ըստ դաշինքի ծրագրի՝ ՀԱՊԿ, ԵԱՏՄ և ԱՊՀ շրջանակում Հայաստանը նախաձեռնողի և ակտիվ անդամի գործողություններ կկատարի՝ նպաստելով կառույցների միջազգային հեղինակության բարձրացմանը: Մեկ այլ կարևոր դրույթ. փորձել հասնել նրան, որ ռուս խաղաղապահները երկարատև ժամանակ մնան սահմաններում,

միևնույն ժամանակ դիվանագիտական ջանքերով հասնել նրան, որ նրանք ստանձնեն ԵԱՀԿ պաշտոնական ներկայացուցչությունը տարածաշրջանում:

Հարևան պետություններ. **Իրանի** հետ հարաբերություններում խրախուսվում են երկկողմ հարաբերությունները և դրանց հնարավորինս ձերբազատումը երրորդ երկրների միջամտությունից: Իրանի հետ է կապվում երկու կարևոր միջպետական եռակողմ նախաձեռնություններ՝ «Իրան-Հայաստան-Հունաստան» և «Իրան-Հայաստան-Ռուսաստան»: **Վրաստանի** հետ հարաբերություններում, հաշվի առնելով երկու պետությունների արտաքին կողմնորոշման հակառակ վեկտորները, դրանք թե՛ անվտանգային, և թե՛ տնտեսական խոչընդոտ չպետք է հանդիսանան, այլ կոմպլեմենտարիզմի միջոցով պետք է հասնել երկկողմ օգուտների:

Եվրամիության հետ օրակարգերի ձևավորմանն իրավական հիմքերով նպաստելը ներկայացվում է որպես արտաքին քաղաքական գերակայություն, որը պետք է նպաստի ԵՄ-ից օժանդակություն ստացող բարեփոխումների ծրագրերին: Հիշատակվել է հայերիս եվրոպական ժողովուրդներին քաղաքակրթական առումով մոտ լինելը:

Չինաստան. կարևորվում է երկկողմ հարաբերությունների պոտենցիալը, սակայն միևնույն ժամանակ նշվում է դրանց ներկայիս անկատարությունը:

Ադրբեջան, Թուրքիա. Արցախյան պատերազմներում կրած վնասների կապակցությամբ առաջարկել են Ադրբեջանին պահանջ ներկայացնել, նաև Արցախի գրավյալ տարածքների վերադարձի հարցում նախատեսել են հանդես գալ պահանջատիրության դիրքերից՝ առանց ռազմական միջամտության, փոխարենն **ակնկալելով** միջազգային հանրության ճնշման ներքո նախկին ԼՂԻՄ-ի շրջանների վերականգնումը, հետո նոր միայն հնարավոր համարելով հայ և ադրբեջանցի ժողովուրդ-

ների խաղաղ գոյակցության հնարավորությունն՝ Ադրբեյջանի ծավալապաշտության զսպմամբ: Թուրքիայի հետ հարաբերությունների վերսկսման համար առաջ են քաշվել մի քանի դրույթներ, որոնք կապված են Ցեղասպանության նկատմամբ մերժողական քաղաքականության և Ադրբեյջանին սատարելու հետ: Դաշինքն արցախյան հիմնահարցի կարգավորման ձևաչափ է դիտարկում ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի ակտիվ աշխատանքի վերջնական արդյունքը կլինեն ազգերի ինքնորոշման սկզբունքի կիրառումը: Միջազգային հանրության նկատմամբ ներկայացրել են պահանջ՝ պատերազմի ընթացքում հումանիտար իրավունքի խախտման մի շարք դեպքերի դատապարտման և ադրբեյջանաթուրքական քաղաքականության զսպման տիրություն:

Ինֆոքոմին տրված [հարցազրույցում](#) դաշինքի անդամ Վարդան Ոսկանյանը նշել է, որ ներկայիս Թուրքիայի՝ Էրդողանական վարչակարգի հետ չեն պատրաստվում որևէ տեսակ հարաբերության մեջ մտնել, փոխարենը նախատեսում են զարգացնել ասիմետրիկ հարաբերություններ Թուրքիայի հասարակության և այն ուժերի հետ, որոնք կապ չունեն Էրդողանի իշխանության հետ: Տնտեսական քաղաքականության առումով ցուցաբերելու են առավել զգոնություն, որպեսզի Թուրքիան «փափուկ ուժի» միջոցով չկարողանա Հայաստանի տնտեսությունը կախվածության մեջ գցել:

«Ազատության» [հեռուստաբանավեճի](#) ժամանակ դաշինքի անդամ Տիգրան Աբրահամյանը նշեց, որ Հաղորդի և Շուշիի վերադարձի պահանջ լինելու է, բայց մինչ այդ բանակը պետք է բերվի բավարար պատրաստվածության, իսկ հիմա այն կազմաքանդված վիճակում է, ուստի այս պահին այդ պահանջն իրատեսական չէ: ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով բանակցություններն էլ պետք է, ըստ դաշինքի, վերադառնան մինչև 2018 թ. եղած սկզբունքների քննարկմանը:

Ամփոփում

Ամփոփելով վեց քաղաքական ուժերի արտաքին քաղաքականությանը վերաբերող բաղադրիչները, համեմատական վերլուծությամբ եզրահանգում ենք՝

- **Արցախյան հիմնահարցի** կարգավորումը տեսնում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում: 7-րդ գումարման ԱԺ-ում ներկայացված ուժերը, նաև «Հայաստան» դաշինքը և «Պատիվ ունեն» դաշինքը կորցրած տարածքների վերադարձ են ակնկալում. «Քաղաքացիական պայմանագիրը» նշում է միայն նախկին ԼՂԻՄ-ի տարածքների վերականգնման մասին՝ նաև առաջ քաշելով «անջատում հանուն փրկության» մոտեցումը, որը պետք է բացառի ուժի կիրառումը: ԼՀԿ-ն և ԲՀԿ-ն ձգտում են Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնմանը: Ըստ ԲՀԿ-ի՝ Արցախը նախ և առաջ պետք է ստանա միջազգային ճանաչում: ԼՀԿ-ն առաջարկում է ինքնորոշմանը հասնելու «անկախացում-միացում» կամ պարզապես «միացում Հայաստանին» ճանապարհը: «Պատիվ ունեն» դաշինքը ևս պատերազմի արդյունքում կորցրած տարածքների վերադարձ է ակնկալում հակառակորդից, «Հայաստան» դաշինքն էլ նախատեսում է իր ներուժն օգտագործել կորցրած տարածքների վերականգնման նպատակով:
- **Ադրբեջանի** հետ հարաբերություններում ՀԱԿ-ը պատրաստ է գնալ երկխոսության՝ երկուստեք փոխզիջումներ իրականացնելով, արդյունքում ունենալով երկկողմ պայմանագիր: «Հայաստան» դաշինքը Ադրբեջանին համարում է թշնամի պետություն և սահմանափակում հնարավոր երկխոսության առիթները: «Պատիվ ունեն» դաշինքը պահանջատիրության դիրքերից է հանդես գալիս, որի իրականացումից հետո միայն կաշխատեն երկու հասարակությունների միջև երկխոսություն ծավալել:

- **Ռուսաստանը** քաղաքական ուժերի կողմից կարևորագույն գործընկեր և անվտանգության առաջնային վեկտոր է համարվում:
 - ՀԱԿ-ի կողմից ռազմավարական գործընկերության տեսանկյունից առաջ է քաշվում ՀՀ կարևորագույն կառույցների վրա ՌԴ անմիջական հսկողության մասին դրույթը, իսկ բանակի վերազինումը նախատեսվում է միայն ՌԴ-ի հետ համագործակցությամբ: Միաժամանակ հարևան պետությունների հետ երկխոսություն կառուցելիս ՀԱԿ-ը բացառում է երրորդ կողմի ներգրավվածությունը: Անվտանգություն ապահովումը կապվում է ՌԴ-ի հետ, տնտեսության զարգացումն՝ Արևմուտքի:
 - «Հայաստան» դաշինքը ՌԴ-ի հետ է կապում թե՛ անվտանգային, թե՛ տնտեսական և թե՛ տարածաշրջանային համագործակցությունը: «Պատիվ ունենալ» դաշինքի համար ևս ՌԴ-ն բացառիկ դաշնակից է, որի հետ է կապվում ՀՀ-ի և Արցախի անվտանգության ապահովումը, սակայն տնտեսության հարցում արտաքին վեկտորը փորձում են բալանսավորել՝ ՌԴ-ի և Արևմուտքի միջև:
 - ԶՊ-ն հարաբերությունների ընդլայնումը տեսնում է Սյունիքում սահմանային նոր հենակետերի ՌԴ 102-րդ ռազմաբազայի ուժերին համատեղ հսկողությանը փոխանցմամբ, ԲՀԿ-ն՝ նոր ռազմավարական պայմանագրի կքնմամբ, ԼՀԿ-ն էլ՝ նոր համատեղ գործադիր մարման ստեղծմամբ:
- **Տարածաշրջանի և հարևան պետությունների** հանդեպ ՀԱԿ-ը ցուցաբերում է համագործակցության պատրաստակամություն, մասնավորապես՝ առանց միջնորդների Թուրքիայի և Ադրբեջանի հետ երկխոսության մեջ մտնելու և կարգավորման գնալու: «Հայաստան» դաշինքը պատրաստ է դառնալ միջնորդ՝ Վրաստան-ՌԴ, Վրաստան-Արևելահայաստան հարաբերությունների կարգավորման գործընթացում, իսկ Իրանի

դեպքում՝ միջնորդել ԵԱՏՄ-ի հետ համագործակցությունում նրա դերի Էական ավելացման համար: «Պատիվ ունեմ» դաշինքի համար հարևան պետություններից Թուրքիայի հետ բանակցությունների հարցում Ցեղասպանության օրակարգի առաջ քաշում է նախատեսվում: Վրաստանն ու Իրանը դիտարկվում են ՀՀ-ն տարանցիկ դարձնող ուղիների կողմեր: ԲԳ-ի և ԲՀԿ-ի կողմից կարևորվում է տարածաշրջանի ապաշրջափակումը, սակայն որոշակի նախապայմաններով, մասնավորապես՝ ԲԳ-ն անհապաղ անհրաժեշտություն է համարում 2020 թ. նոյեմբերի 9-ին և 2021 թ. հունվարի 11-ին ստորագրված եռակողմ հայտարարությունների իրականացումն, այդ թվում՝ տարածաշրջանի ապաշրջափակումը, իսկ ԲՀԿ-ի կողմից տարածաշրջանի պետություններից Թուրքիան և Ադրբեջանը մատնանշվում են, որպես թշնամի պետություններ: ԼՀԿ-ն նախատեսել էր գնալ Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ միջազգային դատական հայցերի ներկայացման ճանապարհով: Իրանն ու Վրաստանը ԲՀԿ-ի կողմից համարվում են բարեկամական պետություններ, ԲԳ-ի կողմից Իրանը դիտարկվում է որպես հնարավոր գործընկեր՝ անվտանգության ոլորտում, իսկ ԼՀԿ-ն հիշատակում է պատերազմի ժամանակ Իրանի և Վրաստանի ոչ բարեկամական դրսևորումները:

- **ԵՄ-ին** անդրադարձը բավականին կարճ է եղել՝ ծրագրային դրույթներում և քաղաքական բանավեճերի ժամանակ, ինչպես նաև ընտրողների հետ հանդիպումների ժամանակ: Սակայն պետք է նկատել, որ ՀԱԿ-ի և «Պատիվ ունեմ» դաշինքի համար ԵՄ-ն կարևոր տնտեսական գործընկեր է, իսկ «Հայաստան» դաշինքը գերծ է մնացել դրա հիշատակումից:
- **ԱՄՆ-ի** առանձնակի դերակատարմանը քաղաքական ուժերը մեծամասամբ չեն անդրադարձել, սակայն հղում անելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող

երկրներին, դերակատարումը կարևորվում է և սպասելիքներ ունեն:

- **Չինաստան.** Հարավկովկասյան տարածաշրջանից դուրս, ՌԴ-ից հետո, կարևորությամբ երկրորդ պետությունն է որոշ քաղաքական ուժերի համար: Սակայն քաղաքական և անվտանգային ոլորտներում Չինաստանի հետ որևէ նպատակ չեն կապում. շեշտադրումը տնտեսական հարաբերությունների վրա է՝ բոլոր ծրագրերին մասնակցելու պատրաստակամությամբ:

Անուշիկ Մկրտչյան

Նախընտրական շրջանում քաղաքական ուժերի դիրքորոշումները քաղաքացիական հասարակության նկատմամբ

Քաղաքացիական հասարակության զարգացումն ու արդյունավետ գործունեությունը ժողովրդավարության հիմնաքարերից են: Մասնագիտական գրականությունում, քաղաքացիական հասարակության մասին մեկնաբանություններում ժողովրդավարությունը **հիշատակվում** է՝ որպես քաղաքացիական հասարակության զարգացման և գոյության կարևոր նախապայման: Արդյունքում՝ ինչքան կենսունակ, ակտիվ է քաղհասարակությունն, այդքան կայացած է ժողովրդավարությունը:

Քաղաքացիական հասարակություն տերմինը բավականին հին է. կարելի է այն հանդիպել անգամ Արիստոտելի հայտնի «Աթենական պոլիտես» աշխատությունում, որտեղ նա մասնավորապես օգտագործում է «քաղաքական հասարակություն» տերմինը, որով բնութագրում է հունական պոլիսներում ապրող՝ միևնույն արժեքներն ու նորմերը կիսող ազատ մարդկանց, որոնք ապրում էին օրենքի գերակայության ներքո: Հետագայում «քաղաքացիական հասարակություն» եզրույթը մի շարք մեկնաբանություններ է ստացել և ակտիվ մասնագիտական բառապաշար է մտել 18-րդ դարում. դրանով նկարագրում էին ավտորիտար ռեժիմների դեմ պայքարող խմբերին՝ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, Լատինական Ամերիկայում: Ըստ Համաշխարհային բանկի **բնութագրման**՝ քաղաքացիական հասա-

րակություն տերմինն ավելի ընդգրկուն է: Այն վերագրվում է մեծ թվով կազմակերպությունների, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, համատիրությունները, ազգային փոքրամասնության խմբերը, արհմիությունները, բարեգործական, կրոնական կազմակերպությունները և հիմնադրամները:

Սույն հետազոտությունում դիտարկվելու են նախընտրական շրջանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ), մասնավորապես հասարակական կազմակերպությունների նկատմամբ քաղաքական ուժերի դիրքորոշումները, քանի որ վերահսկողի և անհրաժեշտ հավասարակշռությունը պահողի դերում երկրի կառավարմանը մասնակցում են հատկապես հասարակական կազմակերպությունները:

Ժամանակի ընթացքում սահմանվել են երկրի կառավարմանը ՔՀԿ-ների մասնակցության մի շարք չափանիշներ. որպես ամփոփ և ամբողջական տարբերակ կարելի է դիտարկել, հատկապես, Եվրոպայի խորհրդի առաջարկած հետևյալ [չափանիշները](#)՝

- Մասնակցություն. ՔՀԿ-ներն, իրենց ակտիվ և մտահոգ անդամների հետ մշտապես կապի մեջ լինելով, տեղյակ են հասարակությանը հուզող խնդիրներից և ունեն բաց, ազատ հնարավորություններ դրանք արտահայտելու, առաջարկներով հանդես գալու կառավարման տարբեր օղակների մոտ:
- Վստահություն. ՔՀԿ-ների և հանրային իշխանության ներկայացուցիչների միջև վստահությունը շատ կարևոր և էական դեր ունի, քանի որ հենց այդ վստահության վրա պետք է կառուցվի նրանց համագործակցությունը՝ հիմնված փոխադարձ հարգանքի ու թափանցիկ գործելաոճի վրա:

- Հաշվետվողականություն և թափանցիկություն. ԲՀԿ-ների և իշխանության համագործակցության առանցքում պետք է լինեն հաշվետվողականությունը և թափանցիկությունը, քանի որ հենց սրանք են արդյունավետ և շարունակական համագործակցության անկյունաքարերը:
- Ինքնավարություն, փոխկապակցվածություն և անկախություն. ԲՀԿ-ները պետք է դիտարկվեն որպես անկախ կառույցներ: Նրանք ունեն անկաշկանդ գործելու և տարբեր դիրքորոշումներ պաշտպանելու իրավունք և իշխանությունները պետք է հարգեն ու ընդունեն դա:

Առանցքում ունենալով Եվրոպայի խորհրդի վերը նշված առաջարկները՝ սույն հետազոտությունը նպատակ ունի դիտարկել 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի՝ նախընտրական ծրագրերում քաղհասարակությանը վերաբերող ծրագրային դրույթները, քարոզարշավի օրերին, քաղաքական բանավեճերի ընթացքում տրվող գնահատականները և հնչեցրած կարծիքները: Հաշվի առնելով հետպատերազմյան ճգնաժամը, ներքաղաքական ներկա մարտահրավերները՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում քաղհասարակությանը վերաբերող ծրագրային դրույթները դիտարկվել են հետևյալ չափանիշներով՝

- **Քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն.** չափանիշի նպատակն է հասկանալ, թե քաղաքական ուժերն իրենց նախընտրական ծրագրերում, քարոզարշավի ելույթներում հայտնո՞ւմ էին արդյոք ապագայում քաղհասարակության հետ աշխատելու և համագործակցելու պատրաստա-

կամություն, և թե ի՞նչ ձևաչափով էին տեսնում տվյալ համագործակցությունը՝ հատկապես ո՞ր ոլորտներում:

- **Միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ՔՀԿ-ների աշխատանքի գնահատական.** վերջին երեք տարիներին միջազգային մի շարք դոնորների կողմից ֆինանսավորվող ՔՀԿ-ները և քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչները հայտնվեցին տարբեր խմբերի կողմից սկսած արշավների և մեդիամանիպուլյացիաների միջոցով ատելության խոսքի թիրախում: Հետաքրքիր է տեսնել, թե քաղաքական ուժերն ի՞նչ դիրքորոշում ունեն այս հարցում, դատապարտո՞ւմ են քաղհասարակության դեմ սկսված արշավները, թե՞ հասարակության լայն շերտերին հաճոյանալու համար շարունակում են օգտագործել ատելության խոսքի արշավներ սկսած խմբերի հռետորաբանությունը:
- **Նախընտրական ցուցակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընդգրկում.** 2018 թ. հեղափոխությունից հետո քաղհասարակության մի շարք ներկայացուցիչներ հայտնվեցին կառավարման տարբեր օղակներում: Թեև կարճ ժամանակ անց եղան մի շարք հրաժարականներ, օրինակ՝ Բուն հիմնադրամի տնօրեն Գեմաֆին Գասպարյանը [հրաժարվեց](#) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարի պաշտոնից, իսկ ճարտարապետ, պատմական, մշակութային կառույցների պաշտպանության տարբեր նախաձեռնությունների անդամ Սարհատ Պետրոսյանը՝ [Կադաստրի կոմիտեի ղեկավարի](#) պաշտոնից: Կան կարծիքներ, որ քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչների հոսքը կառավարման օղակներ թուլացրեց քաղհասարակության ունեցած դերն ու կշիռը: Տվյալ չափորոշիչը նպատակ ունի հետազոտել փոփոխությունները նախընտրական ցուցակներում՝ ներկա՞ են արդյոք քաղհասարակության ներկայացուցիչ թեկնածուները, և թե ի՞նչ կարծիք

ունեն այս հարցի շուրջ հենց իրենք՝ քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչները:

- **Խաղաղությանը, հանրային համերաշխությանը և մարդու իրավունքներին անդրադարձ.** հետպատերազմյան ճգնաժամի օրերին քաղաքական ուժերի կողմից տրվող սուր և մեղադրական գնահատականների ֆոնին կարևոր է հասկանալ, թե նախընտրական փուլում ինչքանո՞վ է անդրադարձ կատարվել այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են՝ խաղաղությունը, հանրային համերաշխությունը և մարդու իրավունքները: Նույնքան կարևոր է հասկանալ նաև քաղհասարակության ներկայացուցիչների կարծիքը և սպասելիքները, քանի որ հենց այս գաղափարների հիմքում ընկած արժեքները պետք է լինեն ցանկացած երկրի քաղհասարակության գործունեության առանցքում:

Այս չափանիշներով դիտարկվում են 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցած վեց քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում քաղաքացիական հասարակությանը վերաբերող դրույթները:

«Հայաստան» դաշինք

«Հայաստան» դաշինքը կազմված է Հայ հեղափոխական դաշնակցություն և նորաստեղծ Վերածնվող Հայաստան կուսակցություններից: Դաշինքի նախընտրական ցուցակը գլխավորում էր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առաջին և ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Դաշինքի նախընտրական ցուցակում քաղհասարակությանը կամ մարդու իրավունքներին վերաբերող առանձին գլուխ կամ կետ չկար, փոխարենը [1-11 կետերով](#) կարևորվել է հետևողական, արտաքին քաղաքականության շնորհիվ արժանապատիվ խաղաղության

հաստատումը: Ծրագրում կար նաև առանձին գլուխ՝ «Համերաշխություն, հայկական ներուժի մեկտեղում» վերնագրով. գլխում մասնավորապես խոսվում էր պատերազմի արդյունքում տուժած անձանց աջակցության, սփյուռքի հետ կապերի, անգամ կանանց ակտիվ ներգրավվածության մասին: Հետաքրքիր է հատկապես գլխի վերջին, **55-րդ կետը**. «Չխաթարելով ազատ խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը՝ կներդրվեն նոր կառուցակարգեր, որոնք կկանխարգելեն կեղծ լուրերի մշտական շրջանառությունը, հասարակական կարծիքի մանիպուլատիվ [sic] սխեմաները, անձնավորված կամ ներազգային թշնամանքը, ատելության խոսքը, պետական ինստիտուտների վարկաբեկումն ու նսեմացումը»: «Կներդրվեն նոր կառուցակարգեր» արտահայտությունը տարակարծություն է ստեղծում՝ հաշվի առնելով դեռևս մայիսի 31-ին համակիրների հետ հանդիպմանը Ռ. Քոչարյանի **հայտարարությունը**. «պետք է արգելենք, սահմանափակենք, կասեցնենք այն կազմակերպությունների աշխատանքը, որոնք քայքայում են մեր ազգային ինքնությունը»: Հատկանշական է, որ Ռ. Քոչարյանն այս հայտարարությունն արեց, երբ համակիրներից մեկը հարցրեց, թե ինչպես է վերաբերվում դրսից ֆինանսավորվող, արևմտյան «կեղծ արժեքներ» ներմուծող կազմակերպությունների գործունեությանը: Ռ. Քոչարյանը քարոզարշավի ընթացքում՝ հունիսի 13-ին՝ Բերդ քաղաքում, համակիրների հետ հանդիպմանը, կրկին **վերահաստատեց իր դիրքորոշումն** այս հարցի վերաբերյալ, երբ համակիրներից մեկը հետաքրքրվեց, թե իշխանության գալուց հետո ի՞նչ են անելու «սորոսական» գրասենյակների և լրատվամիջոցների հետ. «Սորոսական գրասենյակների հետ կապված, պետք է օրենքով կարգավորենք: Ուղղակի կան օրենքներ նաև արևմտյան երկրներում, որոնք շատ խիստ արգելում են դրսի ֆինանսավորում՝ նման հարցերով զբաղվելու պարագայում: Մենք ուղղակի օրենսդրական դաշտն ենք ձևավորելու, որից հետո կամ խիստ սահմանափակումներ

կամ ուղղակի արգելք է դրվելու նման կազմակերպության գործունեության առջև: Երկու մոդել կա՝ մեկն արգելում են, մյուսը՝ իրենք պիտի ընդունեն, որ գործակալ են օտարերկրյա: Եվ եթե որպես օտարերկրյա գործակալ այդ աֆիշայով պատրաստ են հանդես գալ, մեր վերահսկողության տակ կհայտնվեն»:⁴

Ինչ վերաբերում է դաշինքի ցուցակում քաղհասարակության ներկայացուցիչների ներգրավվածությանն, ապա ցուցակի 63 համարն «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ ՀԿ-ի ծրագրերի ղեկավար Գայանե Սարգսյանն է, որն, ի դեպ, ըստ «Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն» ՀԿ-ի [հետազոտության](#) տվյալների, ամենահարուստ կին թեկնածուների շարքում է: Ցուցակում են նաև հայտնի լրագրողներ Գեղամ Մանուկյանը (13 համար), Ազնեսա Խամոյանը (15 համար), 7or.am կայքի գլխավոր խմբագիր Արեգնազ Մանուկյանը (30 համար) և Գեղամ Նազարյանը (31 համար):

«Պատիվ ունեն» դաշինք

«Պատիվ ունեն» դաշինքի կազմում են նորաստեղծ «Հայրենիք» և Հայաստանի հանրապետական կուսակցությունները: Դաշինքը գլխավորում է «Հայրենիք» կուսակցության ղեկավար, ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը: Դաշինքի նախընտրական ծրագրում կա ինչպես քաղհասարակությանը վերաբերող առանձին կետ, այնպես էլ առանձին անդրադարձ՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես. ծրագրի [6-րդ կետում](#), որը վերնագրված է «Մարդը որպես բարձրագույն արժեք, նրա իրավունքներն ու ազատությունները», նշվում է Սահմանադրությունում ամրա-

⁴ Այս մեջբերման համատեքստում տե՛ս նաև «Ատելության խոսքը, ռազմատենչ և վիրավորող հռետորաբանությունը 2021-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում» գլուխը, էջ 89 (խմբ. ծանոթ.):

գրված մարդու իրավունքների հարգումն ու պաշտպանությունը՝ որպես դաշինքի առաջնահերթություն, կարևորվում է իրավագիտակից և մարդու իրավունքների հանդեպ հարգանք ունեցող քաղաքացիների կրթությունը, ինչպես նաև խոսվում է մարդու իրավունքների պաշտպանության նոր երաշխիքների և կառուցակարգերի ներդրման մասին: Ամմիջապես **հաջորդ կեսն** անդրադառնում է արդեն քաղհասարակությանը, որտեղ գլխատառերով նշված է, որ դաշինքի նպատակն է ազգային օրակարգ ունեցող գործող քաղաքացիական հասարակություն կերտելը: Ձորեղ քաղաքացիական հասարակության ստեղծումը դաշինքը տեսնում է հատկապես համատիրությունների ինստիտուտի կայացման մեջ:

Դաշինքի նախընտրական ծրագրի 6-րդ կետում ամրագրված արժեքներին, նկատելիորեն, հակասում էին դաշինքի անդամների հանրային ելույթները: Օրինակ՝ հունիսի 13-ին, «ԱրմՆյուզ» հեռուստատեսության եթերում դաշինքը գլխավորող Ա. Վանեցյանը լրագրող Արման Սաղաթեյանի հետ **հանդիպման** ընթացքում, այն հարցին, թե ի՞նչ է կարծում Հայաստանում և՛ս պետք է գործի օրենք՝ իրավական ռեժիմ օտարերկրյա գործակալների դեմ, որը բնորոշ է, օրինակ, Ռուսաստանին, **պատասխանել** է. «Օտարերկրյա ֆոնդերից ֆինանսավորվող ցանկացած հասարակական կազմակերպություն, որը միջամտում է պետության ներքին գործերին, փորձում է թելադրել իր օրակարգը, չպետք է տեղ ունենա ՀՀ-ում»:

Ի դեպ, Ա. Վանեցյանն ԱԱԾ ղեկավարի պաշտոնից հրաժարականից հետո սկսել էր չթաքցնել իր դիրքորոշումն օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվող կազմակերպությունների գործունեության նկատմամբ, մասնավորապես՝ դեռ 2019 թ. նոյեմբերին 168.am-ում **հարցազրույցի** ընթացքում Սաթիկ Մեյրանյանի հարցին,

թե արդյո՞ք «Սորոսի» գրասենյակի գործունեությունը Հայաստանի Հանրապետության համար վտանգ է պարունակում, **ասել էր**, որ եթե կարճ պատասխանի, ապա՝ այո:

Հայ Ազգային Կոնգրես

ՀԱԿ-ի ցուցակը գլխավորում էր ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Առաջին նախագահի նախընտրական **ծրագրի** առանցքում երկրի անվտանգության խնդիրն է, որի ապահովումը կուսակցությունը տեսնում է միայն ռացիոնալ և իրատեսական արտաքին քաղաքականության մեջ: Կուսակցության նախընտրական ծրագրում թեև չկա քաղաքացիական հասարակությանը վերաբերող առանձին կետ, ՀԱԿ-ի նախընտրական քարոզարշավի շրջանակում հունիսի 9-ին բաց հանդիպում-քննարկում էր կազմակերպվել՝ երիտասարդների և քաղհասարակության ներկայա-ցուցիչների հետ: Հանդիպմանը կուսակցության փոխնախագահ Արամ Մանուկյանը ողջունեց ներկա քաղհասարակության ներկայացուցիչներին և նշեց, որ այդ պահին կար քաղհասարակության աջակցության և ներկայության կարիքը: ՀԱԿ նախընտրական ցուցակի ներկայացուցիչ (6-րդ համար) Աննա Գևորգյանը հանդիպման ընթացքում Քաղաքականության հետազոտական կենտրոնի հարցին, թե ի՞նչ դիրքորոշում ունի ՀԱԿ-ն այսպես կոչված արևմտյան աղբյուրների կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների գործունեության մասին, պատասխանեց, որ անընդունելի են համարում այն քաղաքական ուժերի դիրքորոշումները, որոնք անվերջ տարբեր կազմակերպություններ փակելու կոչերով են հանդես գալիս. «Նման ուժերի շահագրգռվածությունն, իհարկե, պարզ է, որովհետև դրանք ուժեր ենք, որոնք ժողովրդավարական արժեքները ու սկզբունքները ոչ միայն չեն կրում, այլ ասեմ ավելին՝ համարում են իրենց թշնամին:

Դա ոչ միայն քաղհասարակության հանդեպ է արգահատելի վերաբերմունք, այլ նաև ՀՀ քաղաքացիների, որովհետև այդ արժեքները մեզ խորթ չեն և ոչ էլ ներմուծված, այլ ամրագրված են հենց մեր Սահմանադրությամբ»: «Որպես ազատական-լիբերալ կուսակցություն, մենք միշտ բաց ենք եղել ու շարունակում ենք բաց մնալ քաղհասարակության հետ համագործակցության համար: Իսկ որոշ կազմակերպություններ փակելու կոչերն այնքան ամոթալի են, որ անգամ մեկնաբանության արժանի չեն», – հավելեց Ա. Մանուկյանը:

Կուսակցության ծրագրում մարդու իրավունքների պաշտպանությունն ավելի արդյունավետորեն կազմակերպելու համար **առաջարկվում է** անցում կատարել երկօդակ դատական համակարգին և ներդնել այսպես կոչված «մեղքի ընդունման գործարք» կոչվող դատավարական ինստիտուտը: Ինչ վերաբերում է խաղաղությանը, ապա ՀԱԿ-ը դեռևս 2017 թ. ԱԺ ընտրություններին մասնակցում էր «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» կարգախոսով, և այժմ էլ կուսակցությունը խաղաղության հաստատումը տեսնում է միայն բանակցությունների միջոցով, վստահության մթնոլորտում, հարևանների հետ հարաբերությունների կարգավորմամբ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

ԲՀԿ-ի նախընտրական ցուցակն ինչպես բոլոր ընտրություններում, այս անգամ ևս գլխավորում էր կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Կուսակցության ծրագրում գերակշռում են սոցիալական ամենատարբեր խնդիրներ լուծելու խոստումները: Առանձին կետ կամ դրույթ չկա քաղհասարակության հետ հետագա համագործակցության մասին, բայց դեռ նախորդ տարիներին կուսակցության մի շարք ներկայացուցիչներ՝ ամենատարբեր հարթականերում, բազմիցս

արտահայտել են իրենց դիրքորոշումները՝ միջազգային տարբեր դոնորների հետ աշխատող կառույցների վերաբերյալ, օրինակ՝ կուսակցության նախկին քարտուղար, ԱԺ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը (որն ի դեպ, այս ընտրություններում չկար նախընտրական ցուցակում) ֆեսբուքյան հարթակում կոչ էր արել փակել «Բաց հասարակության հիմնադրամների Հայաստանի» գրասենյակը. «Երբևէ չէի մտածի, որ մի օր կոչ եմ անելու փակել Հայաստանում էս տականքի կողմից ֆինանսավորվող ամեն ինչ: Փակել՝ որպես պետության կազմաքանդման անմիջական մասնակիցների, որպես թուրքի հետ եղբայրություն քարոզողների, որպես Ցեղասպանության պահանջատիրությունը հերքողների, որպես դավաճանություն քարոզողների ու հասարակության ստորագույն բնագոյները թեփի նման ջրի երես հանողների, որպես պղծության ու աղտի համազգային պերֆորմանսի խոսափողների: Սրանք այլևս վտանգ են մեր երկրի ազգային անվտանգությանը: Իրավաբանների հետ քննարկում եմ այս ախտից օրենսդրորեն ազատվելու ուղիները», – **գրել էր** Ն. Զոհրաբյանը:

Հուլիսի 16-ին՝ Սիվիլիթաս հիմնադրամի կողմից կազմակերպված նախընտրական բանավեճից առաջ, Քաղաքականության հետազոտական կենտրոնի հետ առանձին զրույցում ԲՀԿ ներկայացուցիչ Արման Աբովյանը (8-րդ համար) վերահաստատեց նախկին գործընկերոջ դիրքորոշումը. «Այո, պետք է վերահսկել, նաև սահմանափակել, եթե կարիք լինի: Նույն «Բաց հասարակության հիմնադրամների» գործունեության հետ կապված շատ հարցեր կան: Մենք բաց ենք եղել քաղհասարակության հետ աշխատանքում, բայց պետք է տարանջատել իրական քաղհասարակությունը և դրսից ֆինանսավորվող կառույցները», – նշեց Ա. Աբովյանը:

Նախընտրական ծրագրում թեև առանձին կետ չկա խաղաղության և մարդու իրավունքների մասին, բայց **նշվում է**, որ կուսակցության առաջնահերթությունն է

Արցախի կարգավիճակի միջազգային ճանաչումը և դատաիրավական բարեփոխումներով անկախ դատական համակարգ ստեղծելը: Երկու դեպքում էլ նկարագրված չեն այս նպատակներին հասնելու քայլերի մանրամասները:

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունն ընտրություններին մասնակցում էր «Կա այլընտրանք, քվեարկիր» կարգախոսով: Նախընտրական ցուցակը գլխավորում է Էդմոն Մարությանը: Կուսակցությունը հանդես էր գալիս հանրային համերաշխություն ձևավորելու օրակարգով և ամբողջ ընտրարշավի ընթացքում կուսակցության նախընտրական ցուցակի ներկայացուցիչները կազմակերպում էին ակտիվ բակային հանդիպումներ:

Կուսակցության նախընտրական **ծրագիրն** աչքի է ընկնում իր ծավալներով՝ ավելի քան 76 էջ: Նախընտրական ծրագրում մանրամասն նկարագրվում է անվտանգության, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային ոլորտների բարեփոխումների քայլերը: Նախընտրական ծրագրում թեև առանձին կետ չկար քաղհասարակության վերաբերյալ, սակայն կուսակցությունն իր խորհրդարանական գործունեության ընթացքում որևէ խնդրահարույց հայտարարությունով հանդես չի եկել՝ ինչպես քաղհասարակության ներկայացուցիչների, այնպես էլ միջազգային ֆինանսավորում ունեցող կազմակերպությունների վերաբերյալ: Դեռ 2019-ին կուսակցության նախագահ Է. Մարությանը պատասխանելով «ՎԵՏՕ» շարժման՝ օտարերկրյա գործակալ հանդիսացող անձանց մուտքը պետական կառույցներ սահմանափակող օրենք ընդունելու առաջարկին, **նշել էր**. «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը դեմ է ՀՀ-ում ցանկացած ոչ կառավարական կառույցի փակմանը, որն օրենքով սահմանված կարգով գրանցված է արդարա-

դատության նախարարության պետական ռեգիստրում և ծավալում է օրենքի տառին ու ոգուն համապատասխան գործունեություն»։ Նախընտրական ծրագրում նաև կարևորվում է անկախ դատական համակարգի ձևավորումը, «գաղափարախոսություն և հայեցակարգ» բաժնում հատուկ գլխատառերով նշվում է մարդու ազատության, մարդու կյանքի և բարեկեցության, անվտանգության իրավունքի պաշտպանության մասին։ Ընդհանուր առմամբ, կուսակցության նախընտրական ծրագրի առանձնահատկությունը հանրային համերաշխության օրակարգն էր, որի կարևորությունը հատկապես հետպատերազմյան շրջանում ավելի քան հրամայական է։

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

Արտահերթ խորհրդարանական ընտրություններում որպես իշխող քաղաքական ուժ է հանդես եկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը։ Կուսակցության ցուցակը գլխավորում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը։ Կուսակցության նախընտրական ցուցակում ավելի շատ տեղ են զբաղեցնում վերջին երեք տարիներին իշխող ուժի կողմից տարբեր ոլորտներում արված բարեփոխումների նկարագրությունները և ապագայում այդ նույն ոլորտներում նախատեսվող ծրագրերը։ Որպես այդպիսին առանձին կետ չկա քաղհասարակության վերաբերյալ, սակայն **«մարդկային կապիտալ» բաժնում** կարևորվում է քաղաքացիական հասարակության զարգացումը մարզերում՝ երիտասարդների ակտիվացման համար։

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու ներկայացուցիչներն ատելության խոսքի թիրախում հայտնվեցին հատկապես ՔՊ-ի իշխանության գալուց հետո։ Թիրախավորվում էին նաև կուսակցությունն ԱԺ-ում ներկայացնող «Իմ քայլը» խմբա-

կցության մի շարք պատգամավորներ: Սոցիալական մեդիահարթակներում սկսել էր շրջանառվել անգամ «սորոսական պատգամավորներ» եզրույթը: Հետաքրքիր է սակայն, որ իշխանությունն այդպես էլ կոշտ ու միանշանակա՛ն արձագանք չտվեց հարցին, դեռ ավելին՝ «Իմ քայլը» խմբակցության որոշ պատգամավորներ ևս սկսեցին թիրախավորել ու պիտակավորել իրենց գործընկերներին: Հատկապես ակտիվ էր պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը, որը հանրայնորեն դատապարտում էր Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գործունեությունը և, բազմիցս, իր ելույթներում ու գրառումներում **անդադառնում** «հայտնի Սորոսին»: Իր հարցազրույցներից մեկում էլ ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնյանը «լեգիտիմացրել» էր «սորոսական» եզրույթը՝ լրագրողի հարցին ի պատասխան **հայտարարելով**, որ «այո, անգամ «Սորոսի վաստակները» չեն կարող կառավարել ՀՀ-ն»:

Նախընտրական ծրագրում կարևորվում են նաև դատախրավական բարեփոխումները և կոռուպցիայի դեմ պայքարը: Ինչ վերաբերում է նախընտրական ցուցակում քաղհասարակության ներկայացուցիչների ներգրավվածությանը, ապա այս անգամ ԹՊ ցուցակում քաղհասարակությունից նոր դեմքեր ներկայացված չէին:

Քաղաքացիական հասարակության արձագանքները

Հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱԺ **մանդատներ ստացան** ԹՊ-ն (53,91%), «Հայաստան» դաշինքը (21,09%) և «Պատիվ ունեն» դաշինքը (5,22%): Ընտրությունների նման արդյունքից հետո, Քաղաքականության հետազոտական կենտրոնի հետ առանձին զրույցում, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ղեկավար Լևոն Բարսեղյանը նշեց, որ որևէ ձև չի կարողանում ապագայում պատկերացնել համագործակցությունն իրենց ընդդիմություն հռչակած

«Պատիվ ունեն» ու «Հայաստան» դաշինքների հետ. «Ես շատ մեծ դժվարությամբ եմ պատկերացնում որևէ քննարկում պարոն Քոչարյանի հետ, օրինակ ապօրինի ակտիվների վերադարձի մասին: Ավելի շատ ակնկալիքներ ունենք քաղաքական մեծամասնությունից, հաշվի առնելով, որ նրանք հայտարարել են, թե շարունակելու են հավատարիմ մնալ հեղափոխության հռչակած արդյունքներին»:

Լ. Բարսեղյանը, այնուամենայնիվ, չի բացառում, որ արտաքին վտանգի դեպքում կոնսուլիդացիայի կարիք լինի, սակայն ներհայաստանյան խնդիրների պարագայում չի տեսնում որևէ համագործակցության ձևաչափ: Լ. Բարսեղյանը չի կիսում այն կարծիքներն ու պնդումները, թե 2018 թ. հեղափոխությունից հետո քաղհասարակության մի շարք ներկայացուցիչների պետական պաշտոն ստանալը թուլացրեց քաղհասարակությանը. «Բացարձակ համաձայն չեմ, քանի որ դա բնական էվոյուցիա էր: Ժամանակը իրենն անում է, նոր երիտասարդներ են գալիս, գիտելիքի առումով հասունանում ու կադրերի փոփոխություն է լինում»:

«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ-ի տնօրեն, նախկին պատգամավոր Գայանե Աբրահամյանը նույնպես չի պատկերացնում ընդդիմության հետ որևէ ձևի համագործակցություն, քանի որ արժեքային համընկնումների որևէ եզր չի տեսնում. «Համագործակցության հիմնական սեգմենտը մնում է իշխող ուժը, բայց անգամ սա էլ է խնդրահարույց, քանի որ համոզված եմ, որ ավելի են փակվելու իրենց մեջ, կարծրանալու ու ավելի դժվար են ընդունելու որևէ քննադատատություն»:

Ըստ Գ. Աբրահամյանի՝ 2018 թ. հեղափոխությունից հետո քաղհասարակությունը հետքայլ արեց, ինչը բնական էր, քանի որ նպատակ կար թողնել աշխատել, օգնել, ի վերջո արժեքային կարևոր համընկնումներ կային իշխող ուժի հետ, սակայն ժամանակն է կրկին վերականգնել

քաղհասարակության վերահսկող դերը. «Ցավոք սրտի, ժամանակին համապատասխան կապ իշխանությունները չկարողացան ստեղծել քաղհասարակության հետ, կամ էլ ստեղծվեց, բայց այդպես էլ չինստիտուցիոնալացվեց: Ես ինքս առաջարկել եմ քաղհասարակության ներկայացուցիչներից կազմված փորձագիտական խմբեր կազմել ու կցել տարբեր հանձնաժողովների, սակայն սա այդպես էլ չարվեց, մինչդեռ մենք մեծ ներուժ ունեինք, որ կարող էին օգտագործել: Ցավոք, վստահ չեմ, որ այս անգամ այդ ներգրավումը կլինի, և քաղհասարակությունը պետք է վերականգնի իր watchdog-ի դերը»:

«Եվրասիա համագործակցության հիմնադրամի» ծրագրերի տնօրեն Միքայել Հովհաննիսյանի կարծիքով քաղհասարակությունը դիրքավորվելու տեսանկյունից այժմ շատ ծանր վիճակում է գտնվում. «Կլինեն իրավիճակներ, երբ իշխանության գործողություններին միաժամանակ դեմ կարտահայտվի թե՛ ընդդիմությունը և թե՛ քաղհասարակությունը, և այս ընթացիկ համընկնումները ռիսկեր են պարունակում, որովհետև իշխանությունը կսկսի մեղադրել քաղհասարակությանը մերժվածներին աջակցելու մեջ, իսկ իրենց ընդդիմադիր հոշակած ուժերը «կսպիտակեցնեն» իրենց՝ քաղհասարակության հաշվին: Արդյունքում քաղհասարակությունը կրկին երկու կողմից էլ կարող է թիրախավորվել»:

Մ. Հովհաննիսյանը ևս հավանական չի համարում ապագայում որևէ համագործակցություն, և համոզված է, որ ընդդիմությունը դաշտը լցնելու է իրենց պատկանող ՀԿ ներկայացուցիչներով. «Այս պարագայում շատ կարևոր է, որ քաղհասարակության ներսում ներքին ռեֆլեքսիա արվի, քանի որ ընդհանուր ճգնաժամը քաղհասարակության ներսում էլ է խզումներ առաջացրել: Կարևոր հարցերի շուրջ ենթադրվում է, որ օրակարգերը պետք է սինքրոնացվեն և ընդհանրապես, նման Էսկան փոփոխություններից հետո սեփական

գործողությունները վերաբերելու խիստ կարիք կա», – եզրափակեց նա:

Ամփոփում

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել.

- 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների (այս դեպքում՝ հետազոտության շրջանակում դիտարկված 6 ուժերի) նախընտրական ծրագրերի հիմնական դրույթներում առանձին անդրադարձեր չկային քաղհասարակության հետ ապագա համագործակցությանը (բացառությամբ «Պատիվ ունեմ» դաշինքի), ինչը ենթադրաբար բացատրվում է հետպատերազմյան ճգնաժամով պայմանավորված ավելի առաջնահերթ խնդիրների լուծման առաջարկներով հանդես գալուն:
- Հետազոտության շրջանակում դիտարկված վեց քաղաքական ուժերից երեքը՝ «Պատիվ ունեմ», «Հայաստան» դաշինքները և ԲՀԿ-ն, թե՛ մինչև քարոզարշավի սկսվելը, և թե՛ քարոզարշավի ընթացքում վերահաստատել են իրենց կոշտ դիրքորոշումը՝ միջազգային հիմադրամներից ֆինանսավորում ստացող ՀԿ-ների գործունեության հետ կապված, մասնավորապես նշելով, որ իշխանության գալուց հետո պատրաստ են սահմանափակել, ընդհուպ փակել դրանք: Հատկանշական է, որ երեք ուժերն էլ ընտրարշավի ընթացքում միջազգային ֆինանսավորում ստացող ՀԿ-ների մասին խոսելիս նշում էին հատկապես «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» մասին, ինչը ենթադրաբար կապված է հասարակության լայն շերտերի մոտ վերջին երեք տարում հիմնադրամի գործունեության շուրջ մի շարք խմբերի կողմից ստեղծված

աղմուկի ու մանիպուլյացիաների ֆոնին քաղաքական դիվիդենտներ շահելու հետ:

- Հետպատերազմյան ծանր վիճակի պայմաններում ընթացող դժվար և ինչ-որ տեղ թշնամական ընտրապայքարում միայն «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն է հանրային համերաշխության օրակարգը համարել ամենակարևորը և քարոզարշավի ընթացքում համերաշխության գալու հանրային կոչերով հանդես եկել:
- Հետազոտության շրջանակում հարցազրույցի մասնակցած քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչները ոչ իրատեսական ու անհնար են համարել ապագայում խորհրդարանական ընդդիմության հետ համագործակցությունը՝ նշելով, որ չունեն առանձնապես մեծ սպասելիքներ, քանի որ արժեքային մեծ կոնֆլիկտներ կան քաղաքական այդ ուժերի հետ:
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ինչպես հետազոտության շրջանակում արված հարցազրույցներից, այնպես էլ առանձին հանդիպումներից կարելի է ենթադրել, որ նրանք այս փուլում սեփական անելիքները հստակեցնելու ընթացքում են և ապագայում ավելի պարզ կդառնա, թե ինչ դիրքավորում և ինչ դեր կստանձնի քաղաքացիական հասարակությունը 2021 թ. արտահերթ ընտրություններից հետո:

Վիկտորյա Մելքոնյան

Ապատեղեկատվության տարածման և թշնամանք հրահրող հոետորաբանության օգտագործման վերլուծություն

Ապատեղեկատվություն և մանիպուլյացիա

2021 թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ սոցիալական ցանցերն անմասն չմնացին քաղաքական բնույթի ապատեղեկատվության տարածումից՝ կուսակցությունների և դաշինքների ընտրական ցուցակներում ներգրավված և որոշակի կուսակցական պատկանելություն ունեցող անձանց մասին:

Առցանց զանգվածային լրատվության միջոցներն (ՉԼՄ) ապահովել են ապատեղեկատվության արագ և անխոչընդոտ տարածումը՝ մասնավորապես մեծ լսարան ունեցող սոցիալական կայքերում և ծառայել են որպես քաղաքական քարոզչության գործիք: Ապատեղեկատվության հետ զուգահեռ տարածվել են քաղաքական բնույթի լրատվական մանիպուլյատիվ նյութեր և լրատվության խիստ սուբյեկտիվ մեկնաբանություններ:

Վերոնշյալ դրսևորումներն ընտրական գործընթացների վրա ունեցան թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի ազդեցություն՝ սկսած հասարակական կարծիքի ձևավորումից մինչև ընտրական գործընթացին մասնակցության կանխորոշումը:

Սույն աշխատանքում անդրադարձ է կատարվել ընտրությունների նախօրեին ակտիվ ընտրական քարոզարշավի

ընթացքում տարածված կեղծ լրատվությանն ու դրա հերքմանը:

Ընդհանուր առմամբ, ապատեղեկատվության բացահայտման համատեքստում գործի են դրվել փաստերի ստուգման և գնահատման, ինչպես նաև՝ տեղեկության որակման տարբեր սանդղակներ:

Առավել տարածվածը փաստերի ստուգման՝ 1) Կեղծ, 2) Խմբագրված, 3) Մասամբ կեղծ, 4) Առանց համատեքստի, 5) Երգիծանք, 6) Ճշմարտություն ձևաչափերն են: Ընդունելի և հաճախ կիրառելի են նաև 1) Սխալ, 2) Մեծամասամբ սխալ, 3) Առանց վճռի, 4) Մեծամասամբ ճիշտ, 5) Ճիշտ, 6) Ֆեյք, 7) Մանիպուլյատիվ դասակարգումները:

Առանձնացրել ենք հունիսի 1-ից Հայաստանում մեկնարկած [Ֆեյսբուքի փաստերի ստուգման ծրագիրը](#), որը ներառել է հունիս և հուլիս ամիսներին Ֆեյսբուք և Ինստագրամ սոցիալական հարթակներում հայերեն լեզվով տարածված նյութերի բովանդակության ստուգումը և ճշգրտումը: Հայաստանում ծրագիրն իրականացվում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի Media.am կայքի փաստահավաք խմբի միջոցով: Հաշվի է առնվել նաև [Փաստերի ստուգման հարթակի](#) «Փաստաչափի» աշխատանքը:

Օրինակ՝

1. Առանց փաստական հիմքերի [տեղեկություն](#) համարվեց հունիսի 7-ին «ՀՀ սթափ քաղաքացի» ֆեյսբուքյան էջի միջոցով տարածված լուրն առ այն, որ Հայաստանի հատուկ ծառայություններն իբր բացահայտել են, որ Վիլեն Գայֆեջյանը և Խաչատուր Սուքիասյանը 44-օրյա պատերազմի օրերին համագործակցել են Ադրբեյջանի ահաբեկչական կառույցների հետ՝ իբր զբաղվելով զոհերի, անհայտ կորածների և ռազմագերիների առք ու վաճառքով: Տեղեկության աղբյուրը չէր նշվել: Էջի մշտադիտարկման շնորհիվ, պարզ է դարձել, որ այն իր

քաղաքական հայացքներով հարում է Ռ. Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքին:

2. Ֆեյսբուքյան մի շարք խմբերի և սունկ կայքերի միջոցով մայիսի 25-ից սկսեց տարածվել [տեղեկություն](#), որ «Հայաստան» դաշինքը գլխավորող Ռ. Քոչարյանի նախագահության 3-րդ տարում արդեն Հայաստանից մեկ միլիոն մարդ էր հեռացել՝ սովից չմահանալու համար: Փաստերի համադրման արդյունքում պարզ է դարձել, որ տեղեկությունը մանիպուլյատիվ է՝ նշվում է միայն երեք տարիների ընթացքում երկրից մեկնած անձանց քանակը, բայց չի խոսվում նույն ժամանակահատվածում ժամանողների և այդ թվերի տարբերության մասին, որը բոլորովին այլ պատկեր է ստեղծում: 2015 թ. ապրիլին «Ա1+» հեռուստաընկերության լրագրող Միեր Արշակյանի կողմից պատրաստված հոդվածի հիման վրա ստեղծված նյութը վերաշարադրված է, իսկ բովանդակային առումով՝ խեղաթուրված:

3. Կեղծ էր [լուսանկարը](#), որում Ադրբեյջանի նախագահ Ի. Ալիևը Ն. Փաշինյանի նկարով շապիկ էր հագել: Տեղեկատվությունը տարածվել է հունիսի 16-ին՝ 518 օգտատիրոջ կողմից: Փաստերի համադրման արդյունքում պարզ դարձավ, որ նկարն արվել է հունիսի 14-ին Ալիևի՝ Ֆիզուլի (Վարանդա) այցի ժամանակ, իսկ շապիկը եղել է ամբողջությամբ սպիտակ:

4. Միսալ [տեղեկություն](#) համարվեց «Իզվեստիա» թերթի տնօրենների խորհրդի նախագահ Արամ Գաբրելյանովի տեղեկրամյան ալիքում արված գրառումն առ այն, որ Ն. Փաշինյանը նմանակ է օգտագործում: Ա. Գաբրելյանովը որպես ապացույց հրապարակել էր տեսանյութ, որում երևում էր արտաքինապես Ն. Փաշինյանին նման տղամարդ: Լուրը տարածվեց հինգ ՉԼՄ-ներով, շրջանառվեց սոցիալական կայքերում: Փաստերի ստուգման արդյունքում պարզվեց, որ տվյալ անձը պարզապես

մասնակցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հոլովակի պատրաստմանը:

5. Կեղծ էր սոցիալական ցանցերում և սոնկ կայքերում տարածված [տեղեկատվությունը](#), որ Ռ. Քոչարյանը եղել է Ադրբեջանի ԽՍՀ Դաշքեսանի շրջանում բնակվող մի հայուհու և ադրբեջանցու արտամուսնական կապի զավակ: Նյութի ամբողջական տարբերակն ակտիվորեն տարածվում էր ոչ միայն հայկական, այլ նաև ադրբեջանական լրատվական դաշտում: Փաստերի համադրման արդյունքում պարզվել է, որ պնդումները չունեն որևէ հիմնավորում, իսկ նյութի հետ տարածվող լուսանկարները խորհրդային ֆիլմերից են: Փոխարենը, հաստատվել է Ռ. Քոչարյանի ծնողների ծնունդով Լեռնային Ղարաբաղից լինելու փաստը:

6. Կեղծ [տեղեկություն](#) են որակվել այն լուրերը, որ երեխաների պաշտպանության օրը Հանրապետության հրապարակում կազմակերպված միջոցառման ժամանակ ԼԳԲՏ համայնքի դրոշն են ցուցադրել՝ ինչի միջոցով ՀՀ վարչապետն իբր փորձում էր այդ համայնքի սատարումը ստանալ՝ սպասվելիք արտահերթ ընտրություններում: Լուրը տարածվեց առավել քան հինգ ՉԼՄ-ների կողմից: Համանուն հրապարակումներ սկսեցին իրականացնել ֆեյսբուքյան տարբեր օգտատերեր՝ հղում տալով տարածող աղբյուրին: Փաստերի ստուգման արդյունքում պարզվեց, որ երեխաների պաշտպանության օրվա առթիվ ծիածանագույն անիմացիա է ցուցադրվել՝ հրապարակում տեղադրված Էկրաններին: Բացի այդ, ծիածանի գույները թվով յոթն են, իսկ ԼԳԲՏ համայնքի դրոշինը՝ վեցը:

7. Մանիպուլյացիա որակվեց հունիսի 4-ին ֆեյսբուքում տարածված [տեղեկությունը](#), որ վարչապետի թեկնածու Ռ. Քոչարյանի դեմ ցույց էր կազմակերպվել, որն ուղեկցվել էր «մարդասպան» վանկարկումներով: Պարզվեց, որ տեսանյութում երևացող ցույցը տեղի էր ունեցել 2018 թ. օգոստոսի 14-ին՝ Ռ. Քոչարյանի դեմ

Թավշյա հեղափոխությունից հետո սկսված դատական գործընթացի ժամանակ:

8. Մեծամասամբ սխալ **տեղեկություն** է համարվել հունիսի 17-ին կայացած նախընտրական բանավեճին Ն. Փաշինյանի բարձրաձայնած պատերազմի ժամանակ անհայտ կորած կամ գտնվելու վայրն անհայտ մարդկանց 268 թիվը: Փաստերի ստուգման արդյունքում պարզվել է, որ Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից գրանցվել է մոտ 800 անհայտ կորած՝ ներառելով քաղաքացիական անձանց և զինվորականներին: Ըստ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հաղորդակցման ծրագրերի ղեկավար Ջառա Ամատունու՝ թիվը փոփոխական է:

9. Մեծամասամբ ճիշտ է որակվել **տեղեկությունը**, որ տարեսկզբից արտագաղթն աննախադեպ ծավալների է հասել: Նմանօրինակ հայտարարությամբ էր հանդես եկել վարչապետի թեկնածու Ռ. Քոչարյանը՝ հունիսի 5-ին ընտրողների հետ հանդիպման ժամանակ, որին հաջորդել էր վարչապետի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի համարժեք՝ 3-4 ամսում 70 հազար արտագաղթած մարդ, պնդումը: Տեղեկության ճշտման համար իրականացվել է վերջին 10 տարիների առաջին եռամսյակների Հայաստանի միգրացիոն պատկերի ուսումնասիրություն, իսկ փաստերի համադրման արդյունքում պարզվել է, որ բարձրաձայնված թիվը իրատեսական է և իրականում աննախադեպ:

10. Սխալ է որակվել **տեղեկությունը**, որ քվեատուների ստորին հատվածում արված անցքերն, ամենայն հավանականությամբ, օգտագործվելու էին լցոնումներ իրականացնելու համար: Տեղեկությունն ակտիվորեն տարածվել էր մինչև մեկ տասնյակ տելեգրամյան ալիքներում և կայքերում: Փաստն այն է, որ նման քվեատուներ վաղուց են օգտագործվում:

Հետընտրական զարգացումների դիտանկյունից, սոցիալական ցանցերը շարունակում են տարածել տեղեկատվություն, որը չի բնութագրում իրադարձությունների ամբողջական պատկերը, չի արտահայտում դրանց կոնկրետ էությունը: Կարևոր և հասարակական հնչեղության իրադարձությունների շուրջ տարածվող ապատեղեկատվությունը հնարավորինս արագ ստանում է հակարձագանք ու պարզաբանվում՝ փաստերի ստուգմամբ զբաղվող մասնագետների ջանքերով:

Այնուամենայնիվ, չի կարելի հաշվի չառնել այն փաստը, որ տեղեկատվության հերքումը չի ունենում այն ակնկալվող և անհրաժեշտ ազդեցությունը, որը պետք է չեզոքացնի ապատեղեկատվության բացասական ազդեցությունը: Ընդ որում, պետական կարևոր նշանակության իրադարձությունների համատեքստում դրանց ազդեցությունն առավել մտահոգիչ է, անկանխատեսելի և անվերահսկելի:

Քաղաքական հոռտորաբանություն (թշնամանք հրահրող, ատելության բառապաշար)

2021 թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում առաջադրված թվով 26 քաղաքական կուսակցությունների և դաշինքների ծրագրային դրույթներում տեղ են գտել իրավունքի գերակայության, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ հարգանքի և պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրման, բազմակարծության և քաղաքական ազատությունների ապահովման, հասարակությունում բաժանարար գծերի վերացման և մի շարք այլ առանցքային ժողովրդավարական դրույթներ:

Այսուհանդերձ, նախընտրական շրջանը՝ ներառյալ ընտրական քարոզչությունը, նշանավորվեց քաղաքական ատելություն պարունակող արտահայտությունների, կոչերի աննախադեպ կիրառմամբ ու տարածմամբ, որոնք

չկայացած հանրային քննարկումների և ոչ կառուցողական քաղաքական բանավեճի հիմք հանդիսացան:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի [գնահատականով](#)՝ զուտ բովանդակային մասով՝ այս ընտրությունները «խայտառակ» էին: Այս եզրակացության համար հիմք են ծառայել թշնամության բառամթերքը, մանիպուլյատիվ հնարքների ամբողջ գործիքակազմը, միմյանց քաղաքականապես ոչնչացնելու մոլուցքը, քննարկումներում ծրագրային դրույթների պակասը:

Ատելության խոսքը սպառնալիք է ժողովրդավարական արժեքների, հասարակության կայունության և խաղաղության համար, իսկ քաղաքական բնույթի, մեծ մասշտաբի ատելության խոսքն ազգային-պետական սպառնալիք է, որը հանգեցնում է քաղաքական ամբոխավարության և ցինիզմի, քաղաքական-հասարակական բևեռացման, գաղափարական անհանդուրժողականության, քաղաքական ապակայունացման:

Քաղաքական թշնամանք հրահրող և ատելություն պարունակող հռետորաբանություն լայնորեն կիրառվել և ակտիվ տարածվել է՝

- Չանգվածային լրատվության միջոցների և մեծ թվով սոցիալական առցանց լրատվական գործիքների կողմից, այդ թվում՝ գործի դնելով զանազան տեխնիկական և մասնագիտական հնարքներ:
- Կուսակցությունների, կուսակցական դաշիքների և կուսակցական թեկնածուների կողմից, այդ թվում՝ կիրառելով իրենց անձնական օգտահաշիվ-էջերը, ինչպես նաև նեղ անձնական-բարեկամական շրջանակը:
- Այս կամ այն քաղաքական հայացքներ և կուսակցական պատկանելություն ունեցող անձանց կողմից, այդ թվում՝ կիրառելով իրենց անձնական օգտահաշիվ-

Էջերը, ինչպես նաև նեղ անձնական-քարեկամական շրջանակը:

- Սոցիալական հարթակներում ակտիվ և լայն լսարան ունեցող հասարակական գործիչների կողմից, ովքեր իրենց քաղաքական հայացքներից ելնելով հանդես են եկել հեղինակային գրառումներով, որոնք իրենց հետևորդների կամ լրատվամիջոցների միջոցով լայնորեն տարածվել են համացանցում:

Արդյունքում՝ ցանկացած վերոնշյալ դրսևորում դիտարկվում է որպես քաղաքական ատելության խոսքի, թշնամանք հրահրող հռետորաբանության խրախուսմանն ուղղված քայլ, որն անդառնալիորեն նպաստում է հասարակական բևեռացվածության խորացմանը, քաղաքական ու գաղափարական անդունդների առաջացմանը:

Ընտրական գործընթացները պետականության ամրապնդման և ժողովրդավարության առաջընթացի երաշխավորն են, իսկ քաղաքական ատելության կանոնավոր և զանգվածային բնույթը՝ նամանավանդ ընտրական գործընթացներում, խոչընդոտում է առողջ և արդյունավետ ներհասարակական և պետություն-հասարակություն հաղորդակցության կայացմանը, որն, իր հերթին, հարցականի տակ է դնում քաղաքացիների առողջ մասնակցային վարքագիծը և քաղաքացիական ու քաղաքական իրավունքների պատշաճ իրացումը:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի գնահատմամբ, նմանօրինակ հռետորաբանության իրական վտանգն այն է, որ ավելի է խորանում հետպատերազմյան լարվածությունը և ի հայտ է գալիս սպառնալիք՝ իրական կյանք տեղափոխվելու և ֆիզիկական հաշվեհարդարի վերածվելու:

Նախընտրական ողջ շրջանում քարոզարշավին նախորդող շրջանի համեմատ տարբերությունները նշանակալի

չէին: Շարունակաբար տարածվել են փոխադարձ վիրավորանքներ, ընդ որում՝ նաև անձնական-ընտանեկան մակարդակի: Օգտագործվել է հայհոյանք և զրպարտանքներ:

Պետք է նկատել, որ ապատեղեկատվության տարածումը ևս անուղղակիորեն հանգեցնում է ատելության մթնոլորտի սաստկացմանը: Ելնելով երկրում տիրող բուռն քաղաքական-ընտրական իրականությունից, տեղեկատվության հավաստիության մեջ համոզվելու, փաստերը ստուգելու կամ այլ աղբյուրների հետ համադրելու և դրանց շուրջ հերքումով կամ շտկումով հանդես գալու հնարավորությունը երկրորդական էր դարձել: Շատ դեպքերում հասարակությունն անտարբեր էր ապատեղեկատվության հերքման փաստի նկատմամբ:

Առանց այն էլ լարված ու ոչ բարվոք պատերազմական և հետպատերազմյան իրականությունում մատուցվող լրատվությունը ՋԼՄ-ների «լրատվական մրցավազքով» դարձել էր առավել անորակ, ոչ փաստարկված, հանրային շահ չներկայացնող, բովանդակությունից զուրկ, մանիպուլյատիվ, շինծու և հարուստ հանրային տիրույթին ոչ պատշաճ հռետորաբանությամբ: Վերը նշվածը հիմնականում իրականանում էր արագ, չստուգված տեղեկատվության ձևավորման ու տարածման, աղմկահարույց բովանդակության գեներացման, հասարակության համար հուզական-զգացական բնույթ ունեցող թեմաների արծարծմամբ: Խնդրին անդրադառնում էին որոշ մասնագիտական խմբեր, սակայն ներկա հանրային առաջնահերթությունների համատեքստում նրանց աշխատանքի արդյունավետությունը ցածր էր:

Նախընտրական շրջանում անթույլատրելի կամ ատելություն պարունակող բառամթերքի զանգվածային օգտագործման համատեքստում ուսումնասիրվել են երեք քաղաքական ուժերի կողմից սոցիալական հարթակներում տեղ գտած որոշակի քաղաքական կոչ-ուղերձները,

մամլո ասուլիսները, քարոզչական տեսաուղերձ-հոլովակները, նախընտրական քննարկումները և հարցազրույցները, սոցիալական կայքերում կուսակցությունների և դաշինքների պաշտոնական կայքէջերը և կուսակցական թեկնածուների անձնական օգտահաշիվները:

«Պատիվ ունեմ» դաշինք

«Պատիվ ունեմ» դաշինքի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջը պարբերաբար տեղադրում էր դաշինքի անդամների և ընտրական ցուցակի ներկայացուցիչների ֆեյսբուքյան հեղինակային գրառումները և հարցազրույցները՝ [«#Պատիվ ունեմ»](#) հեշթեգով: Գրառումները մեծամասամբ կրկնվում էին՝ առնվազն երկու անգամ պարբերականությամբ: Մատուցվում էին նույն բովանդակությամբ՝ վիզուալ և այլ ձևաչափերով:

Հիմնականում բոլոր գրառումներն անձնավորված և թիրախավորված՝ հասցեական կոչեր էին, որոնք ուղղված էին ոչ միայն Հայաստանի, այլև Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներին՝ հիմնականում իշխող քաղաքական ուժի վարկանիշի նվազեցման նպատակով: Ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջը կիսվում էր նաև այն գրառումներով, որոնք պարունակում էին հանրային երկխոսության կամ հայտարարությունների համար ոչ պատշաճ բառամթերք՝ ուղղված իշխող քաղաքական ուժի հետևորդներին և ընտրազանգվածին:

Հիմնական ակտիվ գրառումների և ասուլիսների հեղինակներն էին՝ Սերժ Սարգսյանը, Արմեն Աշոտյանը, Վարդան Ոսկանյանը, Արթուր Վանեցյանը, Թագուհի Մինասյանը, Արտակ Զաքարյանը, Թեհմինա Վարդանյանը, Տիգրան Աբրահամյանը, Աննա Մկրտչյանը, Սոս Հակոբյանը և այլք:

Շրջանառության մեջ դրված հիմնական բառերն ու բառակապակցություններն էին՝ «նիկոլիզմ», «նիկոլա-

հպատակ», «կապիտուլյանտ», «ազգի տականք», «քաղաքական դիակ», «գերագույն վիժվածք», «կապիտուլյանտի խմբակ», «կապիտուլյանտ իշխանություն», «դավաճան-անհայրենիք»:

- Դաշինքի անդամ, պաշտպանության նախկին փոխ-նախարար Ա. Չաքարյանն իր ֆեյսբուքյան էջում [գրել](#) է. «2018թ. «հեղափոխության» հրապարակում դաժաղ պտտող մոլորյալ ամբոխները, այդպես էլ չհասկացան, որ իրենք իրենց մահն էին պատրաստում: Նիկոլը դարձավ մահվան խորհրդանիշ՝ սատանայի և թուրքի կերպարանքով: Շուրջ երեք տարի Հայաստանն ու Արցախը տառապում են սատանայի ճանկերում: Համատարած մահ, պատերազմ, հայրենագրկում, տազնապ, հիվանդություններ, սպանություններ, կորուստներ, պառակտումներ, թշնամանք, ատելություն, անարգանք, անբարոյականություն, թալան, աղքատություն, խաբեություն, համազգային նսեմացում, դիակապտություն... Սիրելի Հայ Մարդ, որպես առաջին Քրիստոնյա, որպես Աստծո կողմից ընտրված, բայց սատանայի (նիկոլիզմ) հետևից գնացած Ազգի ներկայացուցիչ, կարողանալու՝ ես արդյոք ապաշխարես ու մաքրվես մահացու մեղքերից: Կարողանալու՝ ես արդյոք քո մեջ ուժ գտնես ու հրաժարվես սատանայից: Աստված օգնական բոլորիդ: [#Պատիվ_ունեն](#)»:⁵

- Ա. Չաքարյանը նաև [գրել](#) է. «Վերջին հինգ ամիսներին սովորեցի առանց հարց տալու, մարդկանց աչքերին նայելով, գլխի ընկնել՝ նիկոլահպատակ է, թե՛ նորմալ, սրտացավ քաղաքացի: Դրանից հետո միայն տալիս եմ ճշտող հարցը: Վերջին շրջանում գրեթե չեմ սխալվել: Աչքերը մարդու հոգին են: Դատարկ հոգիները

⁵ Այս մեջբերման համատեքստում տե՛ս նաև «Ատելության խոսքը, ռազմատենչ և վիրավորող հռետորաբանությունը 2021-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում» գլուխը, էջ 78 (խմբ. ծանոթ.):

Նիկոլինն են: Մարդու աչքերից նաև երևում է՝ ուղեղի նշույլ կա՞, թե՞ ոչ: Բացարձակ անուղեղները՝ Նիկոլինն են: Անուղեղի ընտրածը հաստատ լավ բան չի լինի: [#Պատիվ_ունենա՞»](#):⁶

- Դաշինքի անդամ Լուսինե Ժամհարյանը ֆեյսբուքյան իր էջում [գրել](#) է. «Լսի՛, ազգի տականք, նկարվելու տեղ ե՛ս գտել, գնա՛ ” օղնոկլասնիկում ” քեզ սրտիկներ ուղարկողներիդ հետ նկարվի: Էս տղերքը իրանց կյանքը տվեցին, որ մենք ապրենք, որ դու ու քո խամաճիկները ապրեն ու իրանց արյան գնով պահած հողերը նվեր տաս տիրոջդ: Ուղղակի զգվելի ես, զարշահոտը փչում է վրայիցդ, քաղաքական դիակ... [#Պատիվ_ունենա՞»](#):
- Էդուարդ Շարմազանովը ֆեյսբուքյան իր էջում [գրել](#) է. «Այսօր կապիտուլյանտ հողատուն հերթական անգամ լկտիաբար ստել է, թե ստացել է «վատ բանակցային ժառանգություն»: Դեռեւս 2020-ի հոկտեմբերի 14-ին հրապարակավ ասել եմ՝ Հանրապետականն ապագա կապիտուլյանտին ժառանգել է Ազատ ու Անկախ Արցախ, մարտունակ բանակ, Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի հայանպաստ օրակարգ, որը նա մսխել է: Ավելին, դրա մասին ուղիղ ասել եմ նաև հողատուի հետ հանդիպման ընթացքում: Իսկ ի՞նչ ենք իրականում մենք դրան ժառանգել: 2008-2018 թթ. Հայաստանը նախ եւ առաջ բանակցել է կարգավիճակի հարցը: Նախագահ Սերժ Սարգսյանը բազմիցս նշել է, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահները 2009-2013 թթ. արել են 5 հայտարարություն, որոնց համաձայն Արցախի ժողովուրդն ունի պարտադիր կամարտահայտության իրավունք, առանց սահմանափակման: Չառանցես-չզառանցես՝ ու «քաղաքական

⁶ Տե՛ս նաև էջ 79 (խմբ. ծանոթ.):

դիակ» ես, թուրքի առաջ «ծնկի եկած», 5000 հերոս նահատակի մահվան պատճառ դարձած ու ՀՀ թուրքին «մոտքի վիզա» տված խղճուկ կապիտուլյանտ: [#Պատիվ ունեմ](#):

- 24 TV-ի հետ զրույցում ՀՀԿ անդամ, «Պատիվ ունեմ» դաշինքի անդամ Ա. Մկրտչյանն օգտագործել է «Դաչաներում վեր ընկնի», «կոշիկ լիզող», «հպատակ պետական համակարգ» բառերը:
- Հունիսի 12-ին կայացած «Հանրային քննարկում. Աժարտահերթ ընտրություններ 2021» [հեռուստա-քանակենճի](#) ընթացքում պետք է հնչեին կուսակցությունների ծրագրային դրույթները և քննարկվեին անվտանգային հարցերը, սակայն քննարկումն, ըստ էության, վերածվեց փոխադարձ վիրավորանքների ու լուտանքների:
- ՀՀԿ անդամ Ա. Աշոտյանի հրավիրած [մամլո ասուլիսը](#), որը նվիրված էր «Պատիվ ունեմ» դաշինքի հանդեպ Հանրային հեռուստաընկերության իբրև ցուցաբերած խտրական, հակաժողովրդավարական գործունեությունը դատապարտելուն, ողողված էր ոչ պատշաճ և ատելության բառամթերքով, նաև հրապարակային հայտարարությամբ, որ շատ նորմալ է օգտագործել այն բառամթերքը, որն օգտագործվել էր իր կողմից:

«Ահա այսպիսին են մեր թեկնածուները» տեսաուղերձ-հոլովակների շարքում առանձնացվել են՝

- Ա. Մկրտչյանը հանդես է եկել [տեսաուղերձով](#), որտեղ հստակ կոչ կար «հայրենիքի դավաճաններին» արդար դատաստանի առաջ կանգնեցնելու, պատժելու և «մոլորված քաղաքացիներին» «ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնելու» մասին:

- Թ. Վարդանյանը հանդես է եկել «զոմբիներին» և «անգիտակից մարդկանց» «ճիշտ ճանապարհ» հետքերելու [կոչով](#):

«Հայաստան» դաշինք

Նախընտրական քարոզչության տասներկու օրերի ընթացքում «Հայաստան» դաշինքը ևս ակտիվ նախընտրական քարոզչություն էր իրականացնում ոչ միայն սոցիալական հարթակներում, այլև մարզային հանդիպումների տեսքով (ներառյալ ամփոփիչ հավաքը Երևանի Հանրապետության հրապարակում):

Հիմնականում ուղերձներով ակտիվորեն հանդես էին գալիս Ռոբերտ Քոչարյանը, Սեյրան Օհանյանը, Իշխան Սաղաթեյանը, Վահե Հակոբյանը, Գեղամ Մանուկյանը, Աննա Գրիգորյանը և այլք: Նրանց ելույթներն անձնավորված և թիրախավորված հասցեական կոչեր էին՝ ուղղված իշխող քաղաքական ուժին և նրա վարչապետի թեկնածուին: Հստակ շեշտադրմամբ բարձրաձայնվում էր «ապագային», «անկարող», «անպատասխանատու» իշխանության և «հաղթանակներ ու վերելքներ ապահոված», «ազգային և ժողովրդի հանդեպ պատասխանատվություն ունեցող» ընդդիմության մասին:

Ընտրությունների ավարտից հետո դաշինքի կողմից կիրառվող թշնամանք հրահրող հոետորաբանությունն անցավ հետընտրական շրջան՝ ծավալվելով ընտրությունների արդյունքների շուրջ:

- Ռ. Քոչարյանը «Հայաստան» դաշինքի 1-ին ընդհանուր ժողովի ընթացքում իր [ելույթը](#) մեկնարկեց հետևյալ խոսքերով. «...առողջ հասարակությունը այդպիսի արդյունքների համար չպետք է քվեարկեր իշխանության վերընտրվելու համար, ուղղակի տրամաբանական չէ, եթե խոսքը գնում է առողջ հասարակության մասին»: Որին հաջորդել է՝ «...սա եղել է

իռացիոնալ քվեարկություն և այս քվեարկությունը կարիք ունի սոցիոլոգների բացատրության: Ողղակի պետք է հասկանալ, թե այս քանակը, որ քվեարկել է, ինչ մոտիվացիաներով ու դրդապատճառներով է գնացել դրան»: Հաջորդիվ՝ «... և ուրեմն՝ կամ մենք ունենք հասարակություն, որը զրկված է ինքնապաշտպանական բնագոյից և հայրենասիրությունից, կամ այդ հասարակությունը շարունակում է մնալ խորը մոլորության մեջ», «... հասարակության մի մասը մոլորության մեջ է»: Ավարտելով, Ռ. Քոչարյանը գնահատեց իր ընտրագանգվածն, ասելով. «... Էական տարբերություն է, ուղղակի աչքի զարնող տարբերություն է մեր ընտրողների և իշխանության ընտրողների մեջ... մեր ընտրողը կարողանում է փաստարկներ բերել, թե ինչու է ինքը գնում այս ճանապարհով և համոզմունքով է քվեարկում «Հայաստան» դաշինքի համար: Սա նշանակում է, որ մենք ունենք շատ կայուն, բանիմաց ընտրագանգված... և մենք չենք կարող դավաճանել այդ մարդկանց»: «Հիմա նայեք, թե ինչ պրիմիտիվիզացման է հասել մեր հասարակությունը, որ կարող է այս մակարդակի մանիպուլյացիաներով իրենց վրա ազդել»:

- Նորքի զանգվածում կայացած հերթական հավաքի ժամանակ դաշինքի կազմում գործող ՀՅԴ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը Ն. Փաշինյանին անդրադառնալիս [հայտարարեց](#). «...երկիրը պետք է մաքրվի նիկոլիզմից»: Այնուհետև նույն դաշինքի պատգամավորի թեկնածու Վահե Հակոբյանը, շարունակելով հանդիպումը՝ իր խոսքն սկսեց «ուզում էի սկսել խոսքս ալկոհոլիկի արկածներով, բայց տեսնելով այս տրամադրվածությունը, չեմ ուզում փչացնել այն: Միայն մի կարճ բան կասեմ, մենք նախ իրեն կրուժենք ալկոհոլիզմից, հետո հոգեկան իրա պրոբլեմներից, հետո կդատենք ու կուղարկենք մեկուսարան՝ իրա տեղը էնտեղա»:

- Աշոցքում կայացած **հանդիպման** ժամանակ ՀՅԴ գերագույն մարմնի անդամ, դաշինքի անդամ Արթուր Խաչատրյանն իր խոսքում նշեց. «սրանց համար ամեն ինչ կապիկություն ու շոու է, չագուն ա ֆոռագնում: Բա որ քցես ոտիդ ու ոտդ ջարդես, ո՞նց ես հունիսի 21-ին փախնելու, թե՛ կասկածող կա, որ ինքը ամսի 21-ին փորձելու է փախնի»:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

Հիմնականում բոլոր գրառումներն անձնավորված և թիրախավորված հասցեական ուղերձներ էին: Սուր հռետորաբանության հիմնական շեշտադրումը կատարվում էր «նախկին կեղեքող Էլիտայի» ամբողջական փոփոխության անհրաժեշտության և «նախկինների» վերադարձը չթույլատրելու վրա:

Լայնորեն օգտագործվում էին «մահվան վաճառականներ», «սգի որսորդներ», «ռոբասերժականներ», «բորենիներ», «նախկիններ», «ստրկատիրական կարգի ջատագովներ» պիտակավորումները:

- Քարոզարշավի երկրորդ օրը՝ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում կայացած նախընտրական հանդիպման ժամանակ, ՔՊ վարչության անդամ Հակոբ Արշակյանն իր **ելոյթում** կատարեց հստակ շեշտադրում-ուղերձ. հունիսի 20-ի ընտրությունների արդյունքում երկրից «մաքրել մեր երկիրը ստրկատիրական կարգի ջատագովներից» և «մեկընդմիշտ ազատվելու ռոբասերժական այս համակարգից»: Այնուհետև հարց է ուղղել հավաքվածներին, թե «ձեր կարծիքով, բորենիների այս շքախումբը քանի՞ օրվա կյանք ունի առանց իշխանության» և «մենք հունիսի 20-ին զրկում ենք այս մարդկանց նույնիսկ մինիմալ ձայներ հավաքելու ունակությունից և մեկընդմիշտ

մոռանում ենք նրանց գոյության մասին»։ Հ. Արշակյանի ելույթին անմիջապես հետևել է՝ նույն հռետորաբանությամբ, Սուրեն Պապիկյանի ելույթը. «Դուք առյուծ չեք, դուք փիսիկ եք, իսկ եթե տղամարդկությունդ հերիքում է, արի՛ բանավիճի» նախաբանով Ս. Պապիկյանը դիմեց ընդդիմադիրների ղեկավարներին։ Աժ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանն իր ելույթում դիմելով Ռ. Քոչարյանին և Ս. Սարգսյանին, ասել է. «Արա՛ դուք երկրի նախկին նախագահ եք, թե՛ Ադրբեջանի փաստաբան»՝ շարունակելով «դավաճանը դուք եք» փոխադարձ կերպով ակտիվորեն շրջանառվող հռետորաբանությամբ։ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը հայտարարել է. «Ընտրելով ՔՊ կուսակցությունը՝ երրորդ համարի քվեաթերթիկով, դուք մեզ տալու եք հանձնարարական, դուք մեզ հրամայելու եք նրանց բոլորի հարցերը լուծել մեկընդմիջտ»։ Օրվա ելույթն ամփոփեց Ն. Փաշինյանը՝ հասցեագրելով այն Ռ. Քոչարյանին՝ «Ռոբիկ, դու ոչ մի բան ես, դու ոչնչություն ես, դու տղա չես, դու տղամարդ չես» վանկարկումներով։ Այնուհետև, դիմելով Ս. Սարգսյանին, ասել է «դուրսպրծո՛ւկ, ա՛յ տղա, դու չկաս այնքան, որ իմ տղային Աշոտիկ ասես...»։

Ամփոփում

Այսպիսով, նկատենք, որ մեջբերված արտահայտությունները խնդրահարույց են, պարունակում են վտանգավոր բովանդակություն։ Մասնավորապես, ուսումնասիրված երկու ընդդիմադիր ուժերի կողմից օգտագործվող հիմնական ձևակերպումներն ուղղված էին հասարակության այն հատվածին, որն ընտրել էր իրենց քաղաքական հակառակորդին։ Ընդդիմախոսներին բնութագրող ձևակերպումները հաճախակի թիրախավորում էին մարդկանց ընտրական վարքը, մտավոր ունակությունները,

քաղաքական-քաղաքացիական իրավունքների իրականացումը, կրթական ցենզը, գյուղաբնակ լինելու փաստը: Իշխող քաղաքական ուժի կողմից հիմնական շրջանառվող թեզը «նախկինների» վերադարձի անթույլատրելիությունն էր:

Նման՝ խիստ բևեռացնող, հասարակությանն արհեստականորեն շերտավորող հռետորաբանությունը, հղի է ատելության, քաղաքական ապակայունացման և գաղափարական-քաղաքական անհանդուրժողականության խրախուսմամբ: Ըստ էության, ողջ քարոզարշավի ընթացքում երեք առաջատար քաղաքական ուժերը դատափետում էին միմյանց, հերքում էին իրենց ուղղված մեղադրանքները, կամ հետհայաց անդրադարձներ կատարում «պատերազմական դավաճանություններին»: Այդ շարքում թերևս առանձնանում էին նախընտրական ծրագրերի տնտեսական հատվածի վերաբերյալ կայացած որոշ ավելի բովանդակային բանավեճեր, սակայն, ընդհանուր առմամբ, ծրագրային դրույթները քարոզարշավի ընթացքում փոքր տեղ էին զբաղեցնում՝ գտնվելով վերը նշված քարոզի ստվերում:

Էդգար Վարդանյան

Ատելության խոսքը, ռազմատենչ և վիրավորող հռետորաբանությունը 2021-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում

Ինչի՞ մասին է այս հոդվածը

2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունները, որոնք տեղական և միջազգային հեղինակավոր դիտորդական կազմակերպությունների կողմից գնահատվեցին ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող, թավշյա հեղափոխությունից հետո անցկացրած երկրորդ ընտրություններն էին ու կիշվեն ոչ միայն այդ առումով: Հարկ է նշել, որ թեև կային բովանդակալից, հանգիստ, հարգալից քարոզչական ելույթներ ու բանավեճեր, սակայն հիմնականում դրանք չէին հայտնվում սոցիալական ցանցերի և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Այս ընտրություններին բնորոշ տարրերից մեկը դարձավ որոշ ուժերի անսահման ծայրահեղ բնույթի վիրավորանքներով, ատելության խոսքով, ռազմատենչ հռետորաբանությամբ հագեցած քարոզարշավը:

Սույն հոդվածն այդպիսի տարրեր պարունակող քարոզարշավի հիմնական պատճառները վերլուծելու, ռազմատենչ հռետորաբանության, ատելության խոսքի և պարզապես վիրավորանքների բովանդակությունը, դրանց առիթները, թիրախները, դրանք գեներացնող հիմնական սուբյեկտները բացահայտելու փորձ է: Նաև կոնկրետ

օրինակներով ներկայացվում է, որ խոսքը կարելի է ատելության խոսք համարել, որը՝ վիրավորանք, իսկ որը՝ ռազմատենչ հռետորաբանություն: Անդրադարձ է կատարվում նաև այն հարցին, թե որ խոսքն է առավել վտանգավոր ժողովրդավարական հասարակությունում և ինչու: Հարկ է նշել, որ սույն հոդվածը հիմնված չէ քանակական մեթոդներով իրականացվող մշտադիտարկման վրա: Առանձնացվել և վերլուծվել են այն ելույթներն ու գրառումները, որոնք հեղինակի կարծիքով կարող են ներկայացուցչական համարվել. հիմնականում անդրադարձ է կատարվել առավել աղմկահարույց արտահայտություններին:

Նախընտրական քարոզարշավում տեղ գտած վիրավորանքների, ռազմատենչ հռետորաբանության և ատելության խոսքի մեծ ծավալների պատճառը

Այն, ինչ կներկայացվի այս բաժնում, զուտ նախնական դիտարկումներ են, որոնք կարելի է որպես հիպոթեզ օգտագործել հետազայում՝ ավելի խորքային հետազոտության համար:

Նախ, հարկ է նշել, որ վիրավորանքներով, ատելության խոսքով, ռազմատենչ հռետորաբանությամբ լեցուն քարոզարշավի հիմնական պատճառը 2018-ի թավշյա հեղափոխության արդյունքում իշխանական լծակները կորցրած որոշակի շրջանակների ցանկությունն էր՝ ընտրություններն ամեն գնով ծառայեցնել հասարակական-քաղաքական դաշտում սեփական դիրքերի հնարավորինս վերականգնմանը, Նիկոլ Փաշինյանի ու նրա թիմի, իսկ ընդհանուր առմամբ՝ ժողովրդավարական հեղափոխության հեղինակագրկմանն ուղղված իրենց նպատակներին:

Ինչպես նշում են տարբեր միջազգային և տեղական հեղինակավոր կազմակերպություններ ու հետազո-

տողներ, մինչև 2018-ի հեղափոխությունը Հայաստանում հաստատված էր ավտորիտար-օլիգարխիկ ռեժիմ: Հեղափոխության արդյունքում այդ ռեժիմի ներկայացուցիչներից ոմանց նկատմամբ քրեական գործեր հարուցվեցին: Շատերը գրկվեցին իրենց արտոնյալ կարգավիճակից՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական բնագավառներում: Սակայն, պահպանելով սեփական ռեսուրսների մի զգալի մասն, այդ շրջանակները դիմադրության յուրօրինակ արշավ կազմակերպեցին, փորձելով թեկուզ որոշ չափով վերականգնել կորցրածը, խուսափել քրեական պատասխանատվությունից և հույս փայփայելով, որ ապագայում որոշակի հասարակական-քաղաքական մթնոլորտի, իրավիճակի պարագայում հնարավորություն կունենան նաև վերանվաճելու նախորդ դիրքերը: Հարկ է նկատել, որ այդ արշավը սկսվել էր հեղափոխությունից անմիջապես հետո, սակայն ըստ մեր դիտարկումների այն ինտենսիվացել է 2020-ին, իսկ 44-օրյա պատերազմից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածում, կարելի է ասել, հասել է իր գագաթնակետին:

Վերոնշյալ արշավի կարևորագույն մասը տեղեկատվական պատերազմն էր, որն, ըստ էության, ընթանում էր առանց որևէ կանոնի. այն հազեցած էր ամենաձայրահեղ հայհոյանքներով, ատելության խոսքով, ապատեղեկատվությամբ, տարատեսակ մանիպուլյացիաներով: Եվ հենց այդ արշավն էր, որ հետագայում իր արտացոլումը գտավ արտահերթ ընտրությունների նախընտրական փուլում:

Տեղեկատվական պատերազմի բովանդակության գեներացնողներն առաջ էին քաշել մոտավորապես հետևյալ նարատիվը՝ «իշխանությունների ապաշնորհ և/կամ դավաճանական գործունեության արդյունքում մեծ զոհեր ունենք, պարտություն ենք կրել, Փաշինյանը հայրենի հողերը հանձնել է թշնամուն և այդ իսկ պատճառով նրանից ազատվելու համար գրեթե բոլոր միջոցներն արդարացված են»: 44-օրյա պատերազմի արդյունքում

առաջացած շուրջ, բազմաթիվ անպատասխան հարցերը վերախմաստավորելու, պետական ինստիտուտների երբեմնի անգործության և հեղաշրջման, քաղաքացիական բախումների իրական վտանգի զգացողության, ինչպես նաև ագրեսիվ էմոցիոնալ ֆոն ունեցող մթնոլորտում, ակտիվ մարդկանցից շատերն ուղղակի չէին արտահայտվում, սակավախոս էին նաև իշխանությունները՝ փողոցներում և սոցիալական ցանցերում իրենց հասցեին հնչող հայհոյախառն մեղադրանքները հազվադեպ էին արձագանք ստանում: Իրավիճակը փոխվեց արտահերթ ընտրությունների նախաշեմին (այս հարցին դեռ կանդիդատանք):

Ի դեպ, եթե պատերազմից անմիջապես հետո հիմնականում տեղեկատվական հարձակումներն իրականացնում էին նախկին իշխանությունների քարոզիչները, ապա ընտրական փուլում առաջին պլան դուրս եկան հենց առաջին դեմքերը:

Հարկ է նշել, որ կառավարող ուժը և հատկապես նրա ղեկավարը՝ վարչապետ Ն. Փաշինյանն, իր հերթին, մշտապես աչքի է ընկել ռազմատենչ հռետորաբանությամբ, որը հիմնականում ուղղված է եղել, իր համոզմամբ, ժողովրդի կամքի դեմ դուրս եկած, նրա իշխանությունը «խլել» ցանկացող տարբեր մարդկանց և շրջանակների դեմ: Ընտրությունների նախաշեմին, հասարակական-քաղաքական մթնոլորտի որոշակի հանդարտումից հետո, կառավարող ուժն անցավ հակագրոհի, դրանով իսկ փոխելով տեղեկատվական ֆոնը՝ վիրավորանքներն այլևս միակողմանի չէին: Ակնհայտ էր եական տարբերությունը կառավարող ուժի և ընդդիմադիր որոշակի շրջանակների ռազմատենչ հռետորաբանությունների ձևի և բովանդակության միջև, ինչին նույնպես կանդիդատանք:

Ի՞նչ է ատելության խոսքը և ինչո՞ւ պետք է այն առանձին դիտարկել:

Նախ նշենք, որ չկա ատելության խոսքի ակադեմիական սահմանում: Սակայն մի շարք միջազգային կառույցներ, փորձագիտական շրջանակներ տվել են իրենց մոտավոր սահմանումները: Օրինակ, 2015 թ. ընդունված «Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարականում» **նշված** է. «ատելության խոսքը պետք է ընկալվի որպես անձի կամ անձանց խմբի նկատմամբ նվաստացման, ատելության կամ անարգման, ինչպես նաև այդ անձանց կամ խմբի նկատմամբ ցանկացած ոտնձգության, վիրավորանքի, բացասական կարծրատիպերի ձևավորման, խարանի կամ սպառնալիքի քարոզչությունը, խթանումը կամ որևէ ձևով հրահրումը և վերոնշյալ արտահայտման բոլոր ձևերի արդարացումը «ռասայի», մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկ պատկանելության, տարիքի, հաշմանդամության, լեզվի, կրոնի կամ համոզմունքի, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման և այլ անձնական հատկանիշների կամ կարգավիճակի հիմքով»:

Ատելության խոսքի խնդրին վերաբերվող ՄԱԿ-ի ռազմավարական պլանի և գործողության **փաստաթղթում** ատելության խոսքը սահմանվել է հետևյալ կերպ. «բանավոր խոսքում, գրավոր խոսքում, վարքում դրսևորվող ցանկացած տեսակի հաղորդակցություն, որը թիրախավորում է կամ օգտագործում է ստորացուցիչ կամ խտրական լեզու անձի կամ խմբի վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, թե ովքեր են նրանք, այլ կերպ ասած՝ ելնելով իրենց կրոնից, էթնիկ պատկանելությունից, ազգությունից, ցեղից, մաշկի գույնից, ծագումից, սեռից կամ ինքնության այլ գործոնից» (թարգմ. հեղինակի):

Ինչպես երևում է վերոնշյալ սահմանումներից, ատելությանը լցված, վիրավորող ոչ բոլոր խոսքերն են «ատելության խոսք»: Որպեսզի խոսքը համարվի ատելության խոսք, պետք է մարդը կամ խումբը թիրախավորած լինի՝ ըստ ինքնության որևէ հատկանիշի՝ լինի դա մաշկի գույն, սեռ, թե համոզմունք: Սակայն հայաստանյան լրատվամիջոցներում ատելության խոսքը շատ հաճախ նույնականացվում է ատելությանը լցված յուրաքանչյուր վիրավորական խոսքին, ուշադրությունից դուրս թողնելով այն իրողությունը, որ ատելության խոսքն առանձնահատուկ վտանգավորություն ունի ժողովրդավարական հասարակության համար: Այդ իսկ պատճառով այն անընդունելի է ու վտանգավոր և դիտարկվում է այլ տեսակի հոգետորաբանություններից առանձին:

Ըստ էության, ատելության խոսքը թիրախավորում է բազմազանությունը և պյուրալիզմը՝ սկզբունքներ, որոնք ժողովրդավարական քաղաքական համակարգերի հիմնասյուներից են համարվում: Ատելության խոսքը սնուցում է հակաժողովրդավարական խմբերին, նրանց դարձնում ազդեցիկ, դուրս բերում լրատվամիջոցների առաջին էջեր: Եվ վերջապես, ատելության խոսքը հող է նախապատրաստում ու տարբեր ծայրահեղական խմբերի և անհատների դրդում բռնություն գործադրելու, թշնամանք և խտրականություն հրահրելու՝ այդպիսի խոսքի թիրախ հանդիսացող անձերի և խմբերի նկատմամբ:

Հարկ է նշել, որ հայաստանյան օրենսդրությունն անդրադառնում է ատելության խոսքին: Ըստ ներկայումս գործող ՀՀ քրեական **օրենսգրքի**՝ ընդհուպ մինչև ազատագրվմամբ են պատժվում «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով,

ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը...»:

Ինչպես երևում է վերոնշյալից, Հայաստանի քրեական օրենսգրքում ատելության խոսքը բավականին լայն է սահմանված: Սակայն քրեօրեն պատժելի է համարվում միայն այնպիսի ատելության խոսքը, որն իր թիրախների հանդեպ բռնություն գործադրելու հրապարակային կոչ է պարունակում կամ հրապարակայնորեն արդարացնում է բռնությունն ու քարոզում այն:

Վերջերս ընդունված քրեական օրենսգիրքի նոր **հոդվածով**, որը կգործի 2022-ից, փաստացի քրեականացվել է յուրաքանչյուր տեսակի ատելության խոսք: Նոր քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվում «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն» ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:

Ինչպիսի՞ն էր քարոզարշավի ընթացքում ատելության խոսքը, ռազմատենչ և վիրավորող հռետորաբանությունը

Հայկական մեդիա տիրույթում նախընտրական քարոզչությունը հիմնականում այնպես է լուսաբանվել, որ տպավորություն է ստեղծվել, թե բոլոր նրանք, որոնք դիմել են ռազմատենչ խոսքին (հռետորաբանությանը) և վիրավորանքի լեզվին անպայման նաև «ատելության

խոսք» են գեներացրել: Քարոզարշավի մեր դիտարկումները ցույց են տալիս, որ դա այդպես չէ:

Ստորև վերլուծենք մի շարք օրինակներ և փորձենք ցույց տալ, որ ատելության խոսքը, վիրավորող խոսքը և ռազմատենչ (ագրեսիվ) հռետորաբանությունը թեև կարող են մեկտեղվել, սակայն հաճախ դրանք տարբեր երևույթներ են:

Պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) վերնախավի ներկայացուցիչ Արտակ Չաքարյանը ֆեյսբուքյան իր էջում, մասնավորապես, **գրել է**. «...Նիկոլը դարձավ մահվան խորհրդանիշ՝ սատանայի և թուրքի կերպարանքով»: Դիմելով հայ ազգի ներկայացուցիչներին, որպես «Հայ Մարդ», նա հռետորական հարց է տալիս. «Որպես առաջին Քրիստոնյա, որպես Աստծո կողմից ընտրված, բայց սատանայի (նիկոլիզմ) հետևից գնացած Ազգի ներկայացուցիչ, կարողանալու՞ ես արդյոք ապաշխարես ու մաքրվես մահացու մեղքերից: Կարողանալու՞ ես արդյոք քո մեջ ուժ գտնես ու հրաժարվես սատանայից»:

Այստեղ անձնական բնույթի որակումներ կան՝ Ն. Փաշինյանը պիտակավորվում է որպես «սատանայի» և «թուրքի» կերպարանք ունեցող անձնավորություն: Շահարկվում են հասարակության անդամներից շատերի ազգային և քրիստոնեական զգացմունքները՝ Ն. Փաշինյանը նույնականացվում է աշխարհիկ և հոգևոր ասպարեզներում շատերի կողմից որպես թշնամի՝ չարիք դիտարկվողների (թուրք, սատանա) հետ:

Ա. Չաքարյանի խոսքերը կարող են համարվել ատելության խոսք: Ն. Փաշինյանի օգտին քվեարկած, նրան սատարող քաղաքացիները Չաքարյանի կողմից ներկայացվում են որպես «մահացու մեղք» գործողներ, որպես «սատանայի», «նիկոլիզմի» հետևորդներ: Փաստացի, վիրավորական արտահայտություններ են արվում մարդ-

կանց հսկայական խմբի հասցեին: Այսինքն, վերջինիս անդամների քաղաքական հայացքներով պայմանավորված առնվազն անհանդուրժողականություն, եթե ոչ թշնամանք և ատելություն է հրահրվում կամ քարոզվում նրանց նկատմամբ:

Մեկ այլ **գրառմամբ** Էլ Ա. Չաքարյանն անդրադարձել է այն հարցին, թե ովքեր են, իր կարծիքով, Ն. Փաշինյանի ընտրողները: Նա մասնավորապես գրել է. «Աչքերը մարդու հոգին են: Դատարկ հոգիները Նիկոլինն են: Մարդու աչքերից նաև երևում է՝ ուղեղի նշույլ կա՞, թե՞ ոչ: Բացարձակ անուղեղները՝ Նիկոլինն են: Անուղեղի ընտրածը հաստատ լավ բան չի լինի»:

Պաշտպանության նախկին փոխնախարարը Ն. Փաշինյանի օգտին ձայն տվողներին համարում է «անուղեղ» և «դատարկ հոգիներ» ունեցողներ: Այսինքն, Ա. Չաքարյանը վիրավորում է ընտրողների, մի մեծ մադկային զանգվածի՝ հիմք ընդունելով նրանց ինքնություններից մեկի կոնկրետ հատկանիշը՝ քաղաքական հայացքները:

Նույնը վերաբերվում է «Ազատություն» կուսակցության նախագահ, պատգամավորի թեկնածու Հրանտ Բագրատյանի հետևյալ **խոսքերին**. «Հայ ժողովրդի փրկությունը Նիկոլ Փաշինյանի հեռացումն է, երեք տարի առաջ շատերը սխալվեցին՝ նրան ընտրելով, բայց երկրորդ անգամ սխալվելու՝ Փաշինյանին դարձյալ ընտրելու դեպքում մենք իրավունք ունենք այդ անձանց վիրավորելու: Այն մարդը, որը երկրորդ անգամ ընտրում է Փաշինյանին, հիմար է»:

Հայ Ազգային Կոնգրես կուսակցության (ՀԱԿ) մամլո խոսնակ Արման Մուսինյանը **գրել է**. «Ի պատասխան Նիկոլ Փաշինյանի՝ Առաջին նախագահի հետ բանավիճելու առաջարկի հետ կապված լրագրողների բազմաթիվ հարցումներին, հայտնում եմ. նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ազգակործան պատուհասի հետ խոսելիք չունի»: Այստեղ գործ ունենք կոնկրետ անձին՝

վարչապետի պաշտոնակատար և «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորող Ն. Փաշինյանին տրվող սուբյեկտիվ բնութագրի հետ՝ վերջինս փաստացի գնահատվում է որպես ազգի կործանմանը տարած կամ տանող աղետ, չարիք, մեծ վնասներ հասցնող փորձանք: Իհարկե, անձն, ում ուղղված է նման արտահայտությունը, կարող է վիրավորական համարել այն: Սակայն Ա. Մուսինյանի վերոնշյալ նախադասությունը չի անդրադառնում անձի հատկանիշներին, չի մտնում նրա անձնական կյանք, նրա ներաշխարհ: Այս արտահայտությունը նաև չի թիրախավորում անձին ըստ նրա ինքնության որևէ հատկանիշի: Ըստ էության, տրվում է սուբյեկտիվ խիստ բացասական բնութագիր, գնահատական՝ անձի քաղաքական գործունեությանը: Ա. Մուսինյանի խոսքերը կարելի է որակել որպես ռազմատենչ բնույթ ունեցող՝ սուր, կոշտ խոսք. այն համատեքստը, որի շրջանակներում արտաբերվել է այն, ցույց է տալիս, որ Ն. Փաշինյանը ծայրահեղ վատ վարչապետ է, ազգին ծայրահեղ վատ վիճակի հասցրած ղեկավար, որի հետ նույնիսկ բանավիճելն ավելորդ է: Այսպիսով, վերոնշյալ արտահայտությունը չափազանց կոշտ լինելով հանդերձ ատելության խոսք չէ: Այն կարելի է գնահատել որպես ռազմատենչ բնույթի, վիրավորող խոսք:

«Շնամուկն անընդհատ շարժի մեջ պետք է լինի, ագրեսիվ կեցվածք պետք է ունենա, նման մի երևույթ ունենք այսօրվա իշխանության մոտ, իրենց ԴՆԹ-ն սա է», – [հայտարարել](#) է «Հայաստան» դաշինքի առաջնորդ, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Այս դեպքում տեսնում ենք, որ վիրավորական խոսք է ասվում, ընդհանուր առմամբ, իշխանությունների հասցեին: Այստեղ դժվար է ասել, որ սա ատելության խոսք է. մի կողմից, կոնկրետ խմբին վերագրվում է բացասական հատկանիշ՝ ագրեսիվություն, որը տվյալ կոնտեքստում կարող է որպես վիրավորանք դիտարկվել: Սակայն

հստակ չէ՝ արդյոք այդ խումբը դիտարկվում է որպես որևէ ինքնություն ունեցող, և արդյո՞ք վիրավորող խոսքը հիմնված է այդ խմբի ինքնության որևէ հատկանիշի վրա: Միանշանակ է միայն այն, որ խոսքը ռազմատենչ բնույթի է և հետապնդում է ընտրված թիրախին վիրավորելու ակնհայտ միտում: Ռ. Քոչարյանի այլ խոսքերին դեռ կանդրադառնանք հաջորդ բաժնում:

ՔՊ-ի վարչապետի թեկնածու Ն. Փաշինյանը քարոզարշավի ընթացքում մի շարք կոշտ և աղմկահարույց հայտարարություններ է արել: Ստորև մեջբերենք դրանցից մի քանիսը և վերլուծենք դրանք:

«Չի կարող որևէ ուժ կանգնի ժողովրդի առաջ, չփորձեք, չփորձեք, կտրորենք բոլորիդ, 500 դրամանոց քյաբաբ ուտողներ, և ես սա չեմ ասում որպես վարչապետի պաշտոնակատար, ես ասում եմ որպես Հայաստանի քաղաքացի»:

Նախ, համատեքստին ծանոթ յուրաքանչյուրը կասի, որ խոսքն ուղղված է նախկին, ավտորիտար-օլիգարխիկ ռեժիմի ներկայացուցիչներին, որոնք փորձում էին հասնել Փաշինյանի և նրա թիմի իշխանությունից հեռացմանը՝ այդ թվում փողոցային ակցիաների միջոցով: Փաշինյանը նրանց զգուշացնում է չիրականացնել գործողություններ, որոնք ուղղված են իշխանության տեր հանդիսացող ժողովրդի դեմ: «500 դրամանոց քյաբաբ ուտողներ» արտահայտությունը թեև մարդու անձնական հատկությունները թիրախավորող արտահայտություն չէ, սակայն, ընդհանուր առմամբ, վիրավորող բնույթի է (թեև ուղղված չէ կոնկրետ անձի կամ անձերի դեմ), որի օգտագործումը նպատակ ունի համապատասխան էմոցիանալ ֆոն ստեղծելու միջոցով ցույց տալ, որ այդպիսի շրջանակները և նրանց սատարողները ցածր բարոյա-հոգեբանամշակութային մակարդակի տեր մարդիկ են և ցածր վարձատրության դիմաց հակաիրավական գործունե-

ություն իրականացնողներ: Այստեղ չկա ատելության խոսք, քանի որ արտահայտության թիրախում են ենթադրյալ իրավախախտների ինչ-որ խումբ/խմբեր: Իրավախախտությունն, իրավախախտ լինելը չի կարող մարդկանց համար ինքնություններից մեկը լինել, իրավախախտում իրականացնելու վարքը չի կարող համարվել աշխարհայացք, քաղաքական հայացք, այն չի կարող պաշտպանված լինել պետության կողմից: Հակառակը՝ պետության գործառույթներից մեկը իրավախախտների նկատմամբ լեզվաբան ուժի կիրառումն է:

«Եթե շատ ձեր բայդուշությունները (նկատի ունի, այն, որ որոշ ուժեր կանխատեսում են, որ քաղաքացիական բախումներ, քաղաքացիական պատերազմ է լինելու) և նրանց իրագործելու գործողությունները շարունակեք, դուք **կհայտնվեք հարյուր հազարավոր մարդկանց, քաղաքացիների ոտքերի տակ՝ բառիս բուն և փոխաբերական իմաստով**»: Այստեղ նույնպես ռազմատենչ, կոշտ հայտարարություն է արվում, թեև այստեղ վիրավորական արտահայտություն չկա՝ որևէ վիրավորական բառ կամ արտահայտություն չի օգտագործվում: Փաշինյանը կանխատեսում-համոզմունք է արտահայտում, որ ըստ իրեն, եթե որոշակի շրջանակներ և անձինք հակասահմանադրական բռնի գործողություններ իրականացնեն, ապա ժողովրդի առնվազն զգալի հատվածը չի համակերպվի դրա հետ և կհակազդի դրան՝ այդ թվում փողոցային ակցիաների միջոցով: Ի դեպ, երբ Փաշինյանը նշում է «բառիս փոխաբերական և բուն իմաստով», ապա այստեղ «բուն իմաստովը» կարող ենք հասկանալ այսպես՝ սահմանադրական կարգը պաշտպանելու համար փողոց դուրս եկած հարյուր հազարավոր բողոքի ցույցի մասնակիցները կարող են սահմանադրական կարգի տապալմանն ուղղված բռնի գործողություններ իրականացնողների վրայով քայլել: Ի դեպ, դժվար է պատկերացնել, թե ինչպե՞ս է դա ֆիզիկապես հնարավոր:

«Ես հիմա ասում եմ շատ ուղիղ ու հստակ. ընտրություններից հետո լինելու են վենդետաներ Էն համայնքների ղեկավարների նկատմամբ, ովքեր ժողովրդին փորձում են ենթարկել հարկադրանքի... և ինչպես 2018-ին... Ելի եմ ասում, հանկարծ կոնտեքստից չկտրեք՝ խոսքը ֆիզիկական հաշվեհարդարի մասին չէ, խոսքը քաղաքական և քաղաքացիական վենդետաների մասին է, Եղ համայնքի ղեկավարները, կարճ ասած, ռադ են լինելու, և այնտեղ լինելու են արտահերթ ընտրություններ»: Այստեղ կոշտ խոսքի թիրախում են հայտնվել համայնքների ղեկավար հանդիսացող ենթադրյալ իրավախախտները, որոնց Փաշինյանը թիրախավորում է որպես ժողովրդի իշխանության դեմ հակասահմանադրական գործողություններ իրականացնողների, ուստի այս խոսքերը նույնպես չեն կարող դիտարկվել որպես ատելության խոսք:

«Հունիսի 21-ից Ռոբիկից և Սերժիկից իրենց պամպերսներն են մնալու»: Այստեղ գործ ունենք ծաղրական բնույթի վիրավորող արտահայտության հետ:

«Ես քեզ ասում եմ, Ռոբիկ, դու ոչ մի բան ես, դու տղա չես, դու տղամարդ չես, եթե տղամարդ ես, քեզ հրավիրում եմ բանավեճի, արի կանգնի խոսակցության, ուզում ես գեներով արի, ես խոսքով քեզ կոչնչացնեմ, մեյիդդ կփռեմ գետիններին»:

Այս դեպքում ունենք վիրավորող, ռազմատենչ բնույթի հայտարարություն: Սակայն այն ատելության խոսք չէ, քանի որ չի թիրախավորում անձին՝ ըստ իր որևէ ինքնության հատկանիշի: Այն նաև չի կարելի դիտարկել որպես բռնության սպառնալիք, քանի որ նշվում է՝ «խոսքով կոչնչացնեմ», ինչը բնականաբար տարածվում է «մեյիդդ կփռեմ գետիններին», անմիջապես վերոնշյալ խոսքերից հետո եկող արտահայտությանը:

«Ասել եմ. դրանց սաղին բռնելու եմ շինեմ»՝ խնդրելով տեսախցիկները մի կողմ տանել [հայտարարել է](#)

Ն. Փաշինյանը ճանապարհային կարճատև հանդիպումներից մեկի ժամանակ՝ ի պատասխան մասնակիցներից մեկի հայտարարությանը, որ Քոչարյանին ձայն չտալու համար աշխատանքից են ազատում և նրա այն խնդրանքին, որ հարկավոր է այդպիսիներին «բռնել» և «շինել»: Այստեղ, բնականաբար, ողջամտորեն կարող ենք ենթադրել, որ «շինել» բառը, որը հայիոյանք է, օգտագործվել է որպես հակաիրավական վարք դրսևորողների նկատմամբ խիստ պատիժ իրականացնելը բնորոշող բառ:

Սակայն հարկ է նկատել, որ թիրախն անձնավորված չէ. ծանոթ լինելով քաղաքական համատեքստին, կարող ենք ենթադրել, որ «սրանք» ասելով ենթադրվում է, որ խոսքը հակաիրավական, հակաժողովրդական գործողություններ իրականացնողների որոշակի շրջանակի մասին է, որոնք նախկին, ոչ ժողովրդավարական ռեժիմի քաղաքական-տնտեսական վերնախավի մաս են կազմել: Սա նույնպես ատելության խոսք չէ, քանի որ որևէ մեկը չի թիրախավորվել ըստ իր որևէ ինքնության հատկանիշի:

ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը «Պատիվ ունեմ» դաշինքի համակիրների հետ հանդիպման ժամանակ [ասել է](#). «... իսկ ես անասունները բերել են ու լցրել սառնարանը այդ մարդկանց, բա սատանա՝ չեն սրանք, բա ինչ են»:

Այստեղ ակնհայտ է հենց կառավարող ուժին (պարզ է, որ «սրանք» ասելով իշխանություններին նկատի ունի) վիրավորելու հանգամանքը. մարդկանց «անասուններ» և «սատանա» կոչելը միանշանակ վիրավորող խոսք է: Բացի այդ, վերոնշյալ հայտարարությունը հրահրում է ատելություն ու թշամանք կառավարող վերնախավի նկատմամբ, քանի որ, ըստ Ս. Սարգսյանի, ստացվում է, որ իշխանությունները դիտավորյալ հակամարդկային արարքներ են անում: Սակայն այստեղ դժվար է ասել, սա

ատելության խոսք է, թե պետական համակարգում բարձր դիրք զբաղեցնող մարդկանց նկատմամբ ատելություն հրահրող խոսք: Բանն այն է, որ որպեսզի այն ատելության խոսք համարվի, անհրաժեշտ է, որ հստակ լինի, որ կառավարող ուժի ներկայացուցիչների համար այդ ուժին պատկանելությունն ինքնության ձևերից մեկն է, ինչը դժվար է միանշանակ ասել: Մարդկանցից շատերի համար կառավարող ուժի, կառավարության մաս լինելն ընդամենը ժամանակավոր աշխատանք կարող է լինել և չհանդիսանալ նրանց ինքնության մաս: Ըստ էության, եթե ապացուցված համարվի այն, որ կառավարող ուժի անդամ հանդիսանալը նշանակում է գաղափարակիցների խմբի անդամ լինել, ապա այդ դեպքում կնշանակի, որ կառավարող ուժի նկատմամբ ատելության հրահրումը՝ մարդկանց խմբի նկատմամբ վերջինիս անդամների քաղաքական հայացքներով պայմանավորված ատելության հրահրում է, այսինքն ատելության խոսք է:

Նույնը վերաբերվում է վիրավորական բառերով «Հայաստան» դաշինքի անդամ Լիլիթ Գալստյանի հետևյալ [գրառմանը](#). «Այ տհասներ, այ սրբապիղծներ, պետք չի ամեն տեղ լինել, պետք է ընդամենը կառավարել, կազմակերպել, նվազագույնը՝ աշխատել իմանալ: Թրքահաճ գոյանքներ, ձեր ամբարտավան տգիտությամբ, կյանքեր ու երկիր կործանեցիք: ՆՁՈՎՔՆ Էլ է ձեզ քիչ... ու դեռ փորձում եք շարունակել, ապագայից խոսել...»: Կամ, օրինակ, ԲՀԿ-ի պատգամավոր Արման Աբովյանի նույն առիթով ասված [խոսքերին](#). «Ես գիտեմ միայն մի բան, մենք պետք է անենք ամեն ինչ, ամեն հնարավորը և անհնարինը, որ մեր տղերքի զոհվելը չիմաստազրկեն բոլոր նրանք, ովքեր իրենց անբարտավան հակահայկական, հակապետական, ապագային քաղաքականությամբ բոլորիս գցեցին պլաստիկ տոպրակների սարսափելի իրողության մեջ»:

Իսկ ահա նույն թեմայով գնդապետ Վոլոդյա Հովհան-

նիսյանի «Հայելի» ակումբում կատարված հետևյալ [հայտարարությունը](#)՝ «Մեր հերոս տղաներին դու լեշ ես սարքել, լեշ դառնա քո ընտանիքը, տականք, քո համախոհ իմքայլական վիժվածքների ոհմակը: Դուք պատկերացնում եք, ինչ սրբապղծություն է» արդեն միանշանակ ատելության խոսք է: Ակնհայտ վիրավորական արտահայտությունների օրյեկտը՝ «Իմ քայլը» քաղաքական միավորը, հենց Վ. Հովհաննիսյանի կողմից որպես համախոհների խումբ է դիտարկվում:

Ատելության խոսքի օրինակ են նաև «Պատիվ ունեն» դաշինքի պատգամավորի թեկնածու Թեհմինա Վարդանյանի իշխանություններին ուղղված հետևյալ [խոսքերը](#)՝ «Անիծվե՛ք դուք, նզովյալնե՛ր: Հազար անգամ անիծվե՛ք: Ձեզ հողն էլ իր մեջ չի առնելու, ա՛յ փաբերից դուրս եկած անհայրենիք թշվառներ»: Հետաքրքրական է, որ վերոնշյալ դաշինքի անդամը, կարծես հասկանալով, որ իր խոսքերը մեկանաբանվելու են որպես ատելության խոսք, հարցադրում է անում և միանգամից պատասխանում՝ «Արդյո՞ք ատելության քարոզ է սա: Ո՛չ, այն է, ինչին դուք արժանի եք»: Այս տեքստը կարող է ատելության խոսք համարվել, քանի որ հեղինակը ծայրահեղ բնույթի վիրավորական արտահայտություններ է անում իր ձևակերպմամբ՝ «փաբերից դուրս եկած անհայրենիք թշվառների» հասցեին: Այսինքն, Թ. Վարդանյանը ցանկանում է ընդգծել այն, որ կառավարող ուժը, որոշակի սոցիալական խումբ է ներկայացնում և ունի ինքնության հատկանիշներ:

Ակնհայտ վիրավորանք է պարունակում «Պատիվ ունեն» դաշինքի առաջնորդ Ա. Վանեցյանի հետևյալ [հայտարարությունը](#)՝ «Ես հետդ աշխատել եմ, հիմա աշխատում եմ Սերժ Սարգսյանի հետ, տպավորություն ունեմ, որ գոմից եկել եմ ակադեմիա: Մեղք ես, այ կապիտոլյանտ, Էսքան մեղքի տակ կռացել, տձև չաղացել, քրտինքի մեջ վառվել, գարշահոտ ես զգել դաշտում»:

ՀՀԿ նախագահ Ս. Սարգսյանի հետևյալ [խոսքերը](#)՝ «Ես դրան՝ այդ անբարոյականին 24 ժամ ժամանակ եմ տալիս. կա՛մ պետք է մի փաստ ներկայացնի, կա՛մ ես այնպիսի փաստեր եմ հրապարակելու իր մասին, իր ընտանիքի մասին, եթե արդեն այդտեղ է հասել, որ հասարակությունը թքելու է իր վրա», «Ես հիմա ազատ մարդ եմ և իրեն ասում եմ՝ թող մի փաստ ներկայացնի, չներկայացրեց՝ մորթելու եմ»: Սրանք ծայրահեղ բնույթի վիրավորանքներ պարունակող և ատելություն հրահրող արտահայտություններ են՝ անձամբ Ն. Փաշինյանի և իր ընտանիքի հասցեին, սակայն ատելության խոսք չեն հանդիսանում, քանի որ չեն թիրախավորում նրանց՝ համաձայն իրենց որևէ ինքնության հատկանիշի:

Ի դեպ, այս խոսքերին ի պատասխան Ն. Փաշինյանի հայտարարությունները նույնպես ատելության խոսք չեն, բայց անկասկած ռազմատենչ բնույթի են: Փաշինյանը մասնավորապես [ասել է](#). «Սերժիկ, Սերժիկ, դու իմ զինվոր որդուն Աշոտիկ ասելու իրավունք չունես, ա՛յ տղա: Դու Միշիկի հետ ես շփոթո՞ւմ, թե՞ ում հետ ես շփոթում, այ Սերժիկ: Երկրորդը՝ քեզ, որպես պաշտոնական սուտինյոր երկար տարիների և թրաֆիքինգի մասնագետ, ասում եմ՝ համաձայն եմ, համաձայն եմ: Եվ Ալիևին էլ պաշտոնապես ասում եմ՝ որդուս տալիս եմ բոլոր գերիների դիմաց, պաշտոնապես ասում եմ՝ որդուս տալիս եմ բոլոր գերիների դիմաց: Եվ Սերժիկ, և Քոչարյան, որպես մարդ առնել-ծախելու մասնագետներ, ձեզ լիազորում եմ բանակցել էդ գործով»: «Այ տղա», «պաշտոնական սուտինյոր», «թրաֆիքինգի մասնագետ», «մարդ առնել-ծախելու մասնագետներ»՝ սրանք բոլորը վիրավորող, հեգնական բնույթի պիտակներ են, սակայն պետք է նշել, որ դրանք վերաբերվում են ոչ թե անձի հատկանիշներին, այլ, ըստ Փաշինյանի գնահատման, նրանց գործունեությանը: Դրանցով Փաշինյանը բնութագրում է Ս. Սարգսյանի կամ Ռ. Քոչարյանի քաղաքական գործունեությունը: Այդ արտահայտություններն ատելության խոսք

չեն կարող համարվել, քանի որ չեն թիրախավորում վերոնշյալ անձանց՝ ըստ նրանց այս կամ այն ինքնության որևէ հատկանիշի:

Իսկ օրինակ ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի [արձագանքը](#) Ն. Փաշինյանի վերոնշյալ խոսքերին արդեն խիստ անձնական բնույթի հայհոյանքներ է պարունակում. «Տո այ հարբած տուգիկ, Ալիևին հենց հիմա զանգիր քո ուղիղ կապով, ասա, որ փոխանակում ես որդուդ մեր ռազմագերիների հետ: Թե չէ հերթական անգամ խոսքից թռնողի անուն ես հանելու, այ ակոհոլիկ վիժվածք»: Ինչպես տեսնում ենք՝ «հարբած տուգիկ», «ակոհոլիկ վիժվածք» արտահայտություններն անձի գործունեությանը չեն վերաբերվում, այլ թիրախավորում են հենց անձին՝ վիրավորական բնութագրումներ են տալիս նրան:

Հարկ է նշել, որ սեռական բնույթի հայհոյանքներով հագեցած քարոզչություն էր իրականացնում Ս. Սարգսյանը, որն այդ հայհոյանքները ներկայացնում էր երրորդ անձերի կողմից հնչեցված հայհոյանքները հիշատակելու միջոցով: Մասնավորապես, իր համախոհների հետ հանդիպումներից մեկի ժամանակ Ս. Սարգսյանն [ասել է](#). «Ճակատին նայում ու ասում են՝ «ողջույն, բոգի տղա», դրանից ավելի մեծ կոմպրոմատ էլ ի՞նչ պետք է անեն»: Ս. Սարգսյանը նաև ասել է, որ Փաշինյանը «կուլ է տալիս» նման հայհոյանքները ու նշել, որ Հայաստանի որևէ ղեկավարի նկատմամբ երբևէ նման հայհոյանքներ չեն հնչել: Կարող ենք ենթադրել. Սարգսյանը հասկացնել է տալիս, որ Փաշինյանն արժանի է այդպիսի հայհոյանքների, և որ նա անբարոյական է՝ համաձայն քրեական ենթամշակույթի, քանի որ «կուլ է տալիս» սեռական բնույթի հայհոյանքները:

Ընդհանրապես նկատվում է, որ հայհոյանքների լեզվին դիմող քաղաքական գործիչների և նրանց ակտիվ համակիրների կողմից օգտագործվում են հետխորհրդային

տարածաշրջանում գոյություն ունեցող քրեական ենթամշակույթի հասկացություններն ու բառապաշարը: Ստացվում է, որ երկրի խոշոր քաղաքական գործիչներից շատերը հանդես են գալիս ոչ թե որպես իրավական պետության, այլ՝ քրեական ենթամշակույթի ջատագովներ և փորձում են իրենց ընդդիմախոսների վարկանիշը գցել՝ վերջիններիս հենց այդ ենթամշակույթի հասկացությունների դիտանկյունից բացասական գնահատելով: Նրանք հավանաբար մտածում են, որ այդ ենթամշակույթը դիմացինին ճնշելու արդյունավետ գործիք է, քանզի այն լայն տարածում ունի Հայաստանում և ազդում է մարդկանց գիտակցության, վարքի վրա:

Քաղաքացիական հասարակության թիրախավորումը⁷

Որոշ քաղաքական գործիչների և նրանց աջակիցների խոսույթում նկատվել են քաղաքացիական հասարակության, իսկ լայն առումով՝ ժողովրդավարության դեմ ուղղված շեշտադրումներ: Հետաքրքրական է, որ այս առումով հիմնականում առանձնանում են Ռ. Քոչարյանի բանավոր տեքստերը: Օրինակ՝ քարոզարշավի ժամանակ նա մի քանի անգամ անդրադարձ է կատարել արտասահմանյան դրամաշնորհներ ստացող հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Ուշագրավ է նաև, որ հիմնականում այդ թեման շոշափվել է հարց-պատասխանի ձևաչափով. տպավորություն է, կարծես կար ցանկություն ներկայացնել նման կազմակերպությունների գործունեությունն արգելելու սեփական ցանկությունը՝ որպես ժողովրդի պահանջ: Օրինակ՝ հանդիպումներից մեկի ժամանակ դահլիճից հնչել էր հետևյալ [հարցը](#). «Մենք գիտենք, ինչպիսի աղետ, չարիք

⁷ Այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվում նաև «Նախընտրական շրջանում քաղաքական ուժերի դիրքորոշումները քաղաքացիական հասարակության նկատմամբ» գլխում, էջ 33 (խմբ. ծանոթ.):

են այսպես կոչված Սորոսի հիմնադրամից սնվող հասարակական կազմակերպությունները մեր ազգի, մեր ժողովրդի համար. ինչպե՞ս եք պատրաստվում ընտրություններից հետո վերաբերվել Սորոսի հիմնադրամին»։ Քոչարյանը պատասխանեց. «Գրեթե հանդիպում չկա, որ այդ հարցը չհնչեցվի և ես տեսնում եմ, որ կա հսկայական հանրային պահանջ ուղղակի վերջ տալ նման գործունեությանը Հայաստանում։ Առաջինը՝ մենք համոզված ենք, որ պետք է վերջ տալ և երկրորդը՝ ուղղակի հնարավոր չի այդ հանրային պահանջը չբավարարել, ուղղակի մենք պետք է իրավական ճանապարհ գտնենք, եթե իրավական ճանապարհով դա հնարավոր չի, ուրեմն արագ օրենքներում փոփոխություններ. այն քայլայիչ գործունեությունը, որ արվել է Հայաստանում, չափազանց ծանր հետևանքներ է ունեցել»։

Ընտրողների հետ մեկ այլ հանդիպման ժամանակ Ռ. Քոչարյանը մասնավորապես [հայտարարել](#) է. «Կան օրենքներ, այդ թվում՝ արևմտյան երկրներում, որոնք խստիվ արգելում են դրսի ֆինանսավորումը նման հարցերով զբաղվելու դեպքում»։

Ռ. Քոչարյանի վերոնշյալ և նմանատիպ այլ խոսքեր կարելի է դիտարկել որպես քաղաքացիական հասարակության և, ընդհանուր առմամբ, ժամանակակից ժողովրդավարական մոդելի դեմ հայտարարություն։ Նախ, նա առանց որևէ ապացույց ներկայացնելու լրջագույն, թեև ընդհանրական, մեղադրանքներ է հնչեցնում՝ Հայաստանում տարիներ, տասնամյակներ շարունակ օրինական հիմքերով գործող մի շարք կազմակերպությունների հասցեին։ Բացի այդ, նրա կողմից խտրական վերաբերմունք է դրսևորվում ընդհանրապես արտասահմանյան դրամաշնորհների օգնությամբ աշխատող հասարակական կազմակերպությունների նկատմամբ։ Մինչդեռ քաղաքացիական հասարակության մաս կազմող հասարակական կազմակերպությունները ժողովրդավարական ռեժիմի կարևորագույն ինստի-

տուտներից են: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ փոքր և տնտեսապես ոչ բարձր զարգացած, դեռևս խորքային ժողովրդավարական մշակույթ և ավանդույթներ չունեցող երկրի պարագայում միջազգային տարբեր կառույցների ֆինանսական աջակցությունը հասարակական կազմակերպությունների արդյունավետ գործունեություն ծավալելու կարևորագույն պայմաններից է, ապա կարող ենք ենթադրել, որ Քոչարյանի ցանկությունների կյանքի կոչվելու պարագայում, ըստ էության, քաղաքացիական հասարակությունն առնվազն կնդվեր ընդհատակ:

Ի դեպ, Ռ. Քոչարյանը հանդիպումներից մեկի ժամանակ փաստացի հավասարության նշան է դրել ժողովրդավարական և ավտորիտար քաղաքական ռեժիմների միջև՝ [նշելով](#), որ կապ չունի թե ինչ համակարգ է, կարևորն այն է, որ արդյունավետ կառավարում լինի:

Ամփոփում

Կարելի է եզրակացնել, որ քարոզարշավի փուլում լայն տարածում են ունեցել ինչպես ատելության խոսքը, այնպես էլ զուտ ռազմատենչ հռետորաբանությունը և վիրավորող խոսքը: Վերլուծությունից երևում է, որ ռազմատենչ, վիրավորող հռետորաբանությունը բնորոշ է եղել ինչպես կառավարող ուժին, այնպես էլ որոշ ընդդիմադիր շրջանակների առաջնորդներին և անդամներին: Առանց խնդիրն իրավական տեսանկյունից վերլուծելու, ցույց տվեցինք, որ ատելության խոսքը բնորոշ է եղել ընդդիմադիր որոշ ուժերի ներկայացուցիչներին: Նաև անդրադարձանք այն հարցին, թե ինչու է ատելության խոսքը վտանգավոր ժողովրդավարական հասարակության համար: Նշեցինք հետևյալը. պատճառն այն է, որ այդ խոսքը թիրախավորում է մարդկանց՝ ըստ նրանց այս կամ այն ինքնության հատկանիշի, իսկ դա նշանակում է մարդկանց մեծ խմբերի նկատմամբ

խտրականության, թշնամության և բռնության խթանում:
Վերլուծությունը ցույց տվեց, որ ատելության խոսքի
թիրախում են եղել ՔԴ-ի ընտրողները, ՔԴ-ի համա-
խոհները: Այսինքն, ատելության խոսքը թիրախավորել է
մարդկանց՝ ըստ նրանց քաղաքական հայացքների:

Քարոզարշավի ընթացքում մասնավորապես Ռ. Քոչարյանի
կողմից թիրախավորվել է քաղաքացիական հասարա-
կությունը:

Քաղաքական գործիչներից շատերը լայնորեն կիրառել են
քրեական ենթամշակույթի հոետորաբանությունը և
բառապաշարը:

Վերջում նշենք, որ վիրավորանքը, ռազմատենչ հոետորա-
բանությունը, ատելության խոսքը հակապյուրալիս-
տական բնույթ ունեցող երևույթներ են: Դրանք բացա-
սաբար են ազդում ժողովրդավարական ինստիտուտ-
ների, այդ թվում ընտրությունների վրա՝ մեծապես
խոչընդոտելով առողջ բանավեճին, թիրախավորում են
բազմազանությունը, տարբեր տեսակետների առկա-
յությունը, ստվերում են ծրագրային, գաղափարական
պայքարը: Հասարակական-քաղաքական ասպարեզում
դրանց տարածման ծավալների կրճատմանը հասնելու
խնդիրն առնվազն պետք է լինի բոլոր ժողովրդա-
վարական ուժերի, քաղաքացիական հասարակության
օրակարգում:

ISBN 978-9939-1-1350-0



9 789939 113500